

„Droschak”
ORGANE
de la Fédération
Régional. Arménie.

ԴՐՈՇԱԿ

“ՀԱՅ ՅԵՂԵՓԱԽԵՎԱՆ ԴԱՀՆԵՎԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Դ Ի Ն Ա Փ Ա Մ Ը

“ՄԵՆՔ պիտի ապացուցանենք, որ բոլորներէն աւելի քաղաքակրթեալ ենք”
Ներքին գործ նախարար ԹԱԼԱԱԹ Բ.Յ.
(Ալպատանք թի. 1254)

Բալկանեան արիւնալի տագնապը — ինչպէս և սպասելի էր — իր եղբայրասպան անփառունակ պատերազմով, իր առաջ բերած անխռուսափելի բարդութիւններով, իր ստեղծած բաղաքական սպառնալի կնճիռներով հզօրապէս անդրադառնում է և՛ հայկական ճգնաժամի, հայ ժողովրդի ճակատագրի վրար:

Քանի մեծանում ու փռում է բալկանեան այս խելագոր կատաղութիւնը, ուր յաղթւած ու յաղթող հաւասարապէս եղկելի, հաւասարապէս նողկալի են, քանի բարդանում է այս տիսուր, այս դաժան բաղաքական առեղծւածը, այնքան աւելի յանդուզն հովիք է առնում գեռ երեկ միայն անարդ կերպով էւրոպայից դուրս շպրուած, յաղթահարւած, գրեթէ կործանւած թիւրբիան ։ Նա ոչ միայն ճգնում է բոլոր, միջոցներով յետ իւլել իր կորցրած գաւառները և վերսախն հաստատել այն վայրերում, ուր հինգ գարերի բռնապետական տիրապետութիւնից յետոյ, չկարողացաւ գեմ դնել մատաղ, կենսունակ ազգերի առաջին գրոհին, ո՛չ միայն իր բաշխողուկները մղում է գեպի նղրիանոպօլիս, ապա և խիզախում է ողջ Եւրոպան, գրժում ու ուսահարում Լուդոնեան դաշնագիրը:

Այսպէս արևմուտքում

Արևելքում՝ նրա ամրող ուշադրութիւնը կենարուացած է Հայաստանի վրայ, որ փշի պէս անկելի է երիտասարդ թիւրբերի կոկորդում Օգտաւելով բաղաքական աշխարհի ընդհանուր շփոթից ու տագնապից, թիւրք վարիչներն աշխատում են ժամ առաջ ազատւել իրենց ասիական խոշոր գլխացաւանքից՝ հայկական հարցից:

Եւ միջոցները նոյնն են, ինչ որ Երդիլ-Համիդի ու նրա նախորդների օրօք, միայն մեթօդն է տարբեր և իրենց գործելակերպի մեջ քաղաքերւած անակնկալ պարագաներից, մացրել են աւելի լցուր յանդգնութիւն, աւելի ախտաւոր տեսք, աւելի աւերիչ փութիւնու-

թիւն: Մի կողմից նրանք շեփորելով ի լուր բազաբակրթ աշխարհի հապճեպով պատրաստում են սարևելեան նահանգներից, այսինքն Հայաստանի բնիքուների ծրագիրը էլի մի անգամ պետութիւնների զարթնած զգաստութիւնը թմբեցնելու համար, և միա կողմից աւելի շատապով աւելի մեծ եռանգով բան երբէք շարունակում են հայ տարրի բնաջնջումը նոյն Անտառուի արևելեան նահանգներում: Էնհեռատես, անպատճառ այն բազաբականութիւնը, որ հին թիւրբիայի կործանումը պատրաստեց, շարունակում է վարել նաև սահմանադրական կոչւած թիւրբիայի բախտը, որ առուր ընդարձակելով ու խորացնելով նրա առաջ պատճառթեան փորած անխռուսափելի խորիսորացը, նրա վերջնական ու գահավեժ կործանման համար: Այս նենգամիտու վրանքաց քաղաքականութիւնն է, որ թելադրում է երիտասարդ թիւրբերին օգտակ ընդհանուր շփոթից և ժամ առաջ սպանել հայկական հարցը ցրւելով ու հուր սրով նշնչելով Հայաստանից հայ տարրը նրենց բոլոր գործողութիւնների մեջ անհետեղական, անհաստատ, յարափոխոն ու լրջութիւնից զուրկ, թիւրք վարիչները — հին թէ նոր — սակայն ոնասնական բութ յամառութեամբ շարունակում են հետևողական լինել միայն Հայուհալած, հայուեր քաղաքականութեան մէջ, նրանցից իւրաքանչիւրն աշխատում է նոյնիսկ գերազանցել իր նախորդներին անպատճառ հայ ժողովրդի վրայ, զործ դրած իր ճանր ու մեծ բանութիւններով, ոճիրներով, խժգժութիւններով:

Մինչեւ այժմ հայ պատրիարքը, թէկուզ անլսելի մալու պայմանով, բողոքելու, թագրիբներ տալու գունատ սփոփանը ուներ, որպէս անկապաելի իրաւունք: Այժմ թալաստ բէյ և ընկերութիւն գանում են, որ այդ ել շատ է հայ պատրիարքին և թիւրք կառավարութիւնը հնարաւոր է համարում յանդիմանութիւն կարդալ հայ եկեղեցւոյ պետին, նրա յանձնախակի բողոքների համար, որոնց մեջ իրը թէ ոչափազանցութիւններ կան⁴, իրը թէ Միր Մհե, Սըմկո, քեօր Հիւսէյն, Մուսարէյև հազար ու մի այլ արիւնարբու ոճրագործների գոհմակը գոյութիւն չ'ունենար, իրը թէ ամեն օր չեն առեւնգուում հայ կանայք, չեն խողխողուում հայ մարդիկ՝ հայ աշխարհի մի ծայրից միւսը, իրը թէ թիւրք պաշտօնութեան սանձարձակ կամայականութիւնները

ամեն օր արիւն արցունք քամել չեն տարիս տարաբախտ
հայ ժողովութիւն, իբր թէ բռնի գողթը, բռնի կրօնա-
փախութիւնները, թալան աւերածը սովորակոն չեն հայ
գուշակներում:

Այսպիսով սահմանադրական թիւրքիայում կառավա-
րութիւնն իրեն է վերապահում համիգեան մեթօդով
հայ տարրը կոտորելու, ցըւելու, ջնջելու իրաւունքը.
Նա գտնում է միանգամայն առդար, միանգամայն օրի-
նաւոր, որ իր կազմակերպած բրդական հօրդաները ան-
պատիժ կերպով աւերեն, պղծեն հայի օջաղը, բանդեն
ու հրգեհեն հայ գիւղերը, յափշտակեն ու տիրապե-
տեն հայի վաստակը, նրա կինն ու աղջիկը, բայց նոյն
այդ կառավարութիւնը չի կարողանում հանգուրմել, որ
հայ պատրիարքը իր հօտի, իր զաւակների, իր արիւ-
նակիցների գեմ կատարւած ամենօրեայ հրեշտոր
եղեռնի հանդեպ գեթ իր ցասումի, բողոքի ու վշտի
աղաղակը բարձրացնի

Թիւրքական անուղղայ ու տիսուր մտայնութիւնն է, որ
մի աւելորդ անգամ ու ցայտուն կերպով աշքի և զարն-
ուում թիւրք կառավարութեան այս նոր ցհնիքմով. իս-
լամական գերազանցութեան սկզբունքը, նրա ան-
համբերող ոգին է, որ ըմբռնել չի կարողանում
անիրառուած քրիստոնեայ տարրի բողըն ու զայրօթքը
ստրկութեան լծի տակ, նրա ցասումի ճիշը իսլամական
բռունցքի տակ Թիւրքն ու Բիւրդը ու նրանց հետ բռ-
լոր իսլամինը կարող են խոշտանգել, կեղեցել, սպա-
նել, աւելրել հայ տարրին, բայց սա պէտք է տոկոյ-
պէտք է կրի ամենօրեայ սարսափները և հայ պատ-
րիաքը պէտք է լիի

Խորամը տէր է և ո՞չ խորամը ստրուկ. այսպէս էր հին Թիւրքիայում, այսպէս „սահմանադրական“ Թիւրքիայում ԱՀա ցայտուն, ըմբռոտացուցիչ ծշմարտութիւնը, ահա հին գարշահոտ գանգրենը իր բոլոր հրեշաւոր այլանդակութեամբ, որի մասին լաւ կը լինի որ խորհին բոլոր նրանք, որոնց մէջ տակաւին մնում է վստահութեան, հաւատի, յօյսի թէկուզ մի չնչին Նշոյլ մի յետին պատրանք գեղի խալամի և բրիստոնիսայի իրաւահաւասար կենակցութեան կարելիութիւնը Թիւրքիայում

Հայ պատրիարքը պաշտօնապէս յանդիմանուում է,
որովհետեւ համարձակութիւն ունի խարանելու կառա-
վարական ոճիրները և ճիշտ այդ պահուն մի տրագի-
կական զուգագիպութեամբ Քայազիդի սահմաններում
հինգ անմեղ ու անզեն հայեր թիւրք զինուարների ձեռ-
քով փայրագործն յօշուաւմ են սէինահար Դժբախտ
պատրիարքն այս անգամ բողոքի փոխարէն մի բուռն
տարարիւնէ — իր զաւակների արիւնը — որ դոզդովուն
ձեռքերով շպրտում է թիւրք կառավարութեան անտրգ
ձակատին ի պատասխան իր ստացած յանդիմանուութեան

Յուղ ներքին գործոց նախարար՝ ՀՀ դատավայրություն

Թալատթ բէյ յայտարարի թէ հինգ հայերը ո՞չ թէ խողխողւած են շարամտօքն։ այլ սպանւած ըլստ օրինին, որ նրանք սահմանից փախստական անցնելիս չեն անսացել զինւորների ստոտին և ընկել են գնդակահար, թող թիւրը պաշտօնական սօֆիզմը այս նոր ռազիրն ևս բօղարիկ հազար ու մի կեղծիքներով, յերիւրանքներով, մանաւանդ որ հինգ գիտիներն ել յաւետեան լուս են։

Թիւրքական այս նոր խմբութիւնը, որին այդքան
վատօրէն կապեց իր անունը ու անուշ՝ Թալամթթ բէ,
չի կորցնում իր տրատիկական բնոյթը և բաց է անում
հայոցինչ բաղաբականութեան մի նոր դրւագը: Պարզ է
որ յատուկ կարգադրութիւն կայ կենարօնից՝ կոտորել
սահմանն անցնող դարձող հայերին, որպէս ո փախստա-
կանների: ԶԵ՞ որ մեռելները չեն խօսում...

Ապա Թօգոսուն և շրջակայքի խժդութիւնները
ովենք պիտի ապացուցանենք, որ բուլղարներից աւելի
քաղաքակրթւած ենք^ա, ասել է Նորեքս Թալատով
թէր և այդ ոբազաբակրթւած^ա թիւրքերը իրենց
նախորարի խօսքն ապացուցանելու համար, բուլղար-
ների ձգած երկիրները ոտք կոփելու առաջին իսկ վայր-
կեանին սկսում են գերազանցօրէն թիւրք բազաբակր-
թական գործը — անպաշտպան հայերի և առհասարկե-
քրիստոնեաների անլուր, բարբարոսական կոտրած: Խո-
լամական կատաղութիւնը բաղկանեան վիթխարի ձախո-
ղանքից մարակւած, չի ինայել ո՛չ սեռ, ո՛չ հասակ
անգամ հայ զինւորները, օտառօմանեան անորժան հայ-
րենիքի համար երեկ կռւողները յօշուել են ամարդո-
րէն: Մալդարայի, Սիլիվրիայի, Թօգոսուոյի շրջակայլում
հարիւրներով, հաղարներով են փռւած հայ և այլ քրիս-
տոնեայ նահատակների գիտները:

Եւ Թալասթ բէյ Հերքում է... ինչպէս իր բոլոր նախորդները:

Ահա երիտասարդ թիւրբերից ամենից տանելին, ամենից աւելի հսկողական և հսկուադրականը, ռամկավար սկզբունքներ դաւանողը՝ թալատիթ բէյ, որ ընդամենը մի քանի շաբաթ առաջ հայ պատրիարքին այցի եր գնում որպէս Ներքին գործոց նախարար ու խնդրում էր նրա աջակցութիւնը ոհնական հարցը լուծել առանց օտար միջամտութեան։

Դիմումն արգեօք, թէ անցըերի տրամաբանական
իմաստութիւնը կամեցաւ, որ հայը իր այս ահանդի
ձգնաժամին իր ճամբի վրայ ունենայ ոլաւագոյն՝ հա-
մարւած թիւրը հայրենասէրին, թալասթ բէյին, վերշ-
նապէս համոզւելու համար, որ լաւագոյն թիւրըն իս-
հայակործան քաղաքականութիւնն ունի որպէս *credo*
համիսլամական սկզբունքը, որպէս առաջնորդ ու զե-
կագար, ջարդը, աւերածն ու յաւիտենական կեղծիքը
որպէս վարչական մեթօդ:

Եւ այս զգւելի ռճրագործները, այս անպատկառ կեղ

ծարաւներն են, որոնք փորձում են վերստին խարել և՝ հայութիւն և՝ բաղաբակիրթ աշխարհ։

Արձակը նետած է այլ ևս։

Դառնութիւն չմնաց, որ չճաշակեինք, կոկծալի յուսախարութիւն չմնաց, որ մեր սրտերը չքրբեր ու սոսկումներ, որ մեր հոգիները չքղքտեր համոզելու համար, թէ հասել է ժամանակը նողկանքով ու սարսափով երես դարձնել թիւքք կառավարութեան կեղծ ու պատիր խոստումներից, նրա նենդ չողոքորթութիւններից և հայի փրկութիւնը որոնել միայն և միայն Եւրոպայի հզօր, իրական, անկախ կօնտրոլի մէջ։

Կօնտրոլ, որ չորմի հայի ճակատագիրը Պօլսի անգերջ դաւերից, ոճրագործ բազուկները խորտակի և բաղաբական ու կրօնական մոլեռանդութիւնը սանձի, խուարի մէջ գործող բոլոր մանր ու մեծ սրիկաներին արդարագատութեան հզօր գարշապարի տակ փշի։

ԱՂԵՑՆԵՐ ԵԻ ՀԱԿԱՀԱՐԻԱԾՆԵՐ

Զգւում է կարմիր, գերեզմանային շարանը Հայ ժողվուրդը միանգամ ևս բաւութեան նոխազ է։ Ռօդոսու և Մալգարա նոյնպէս տեսան արիւնի մղաւանջը։ Զինուոր և խուժան այնտեղ ևս միացած՝ սարբեցին սովորական խրախճանները, որոնք, բարերախտաբար, չստոցան նախկինների համեմատութիւնը, աղէտը, այնուամենայնիւ, մեծ է, և ինչպէս միշտ, հայ տարրի թուլամորթ անհօգութիւնը մասամբ պատասխանառու է կատարւածի համար... Շատ հեռատես ու խորաթափանց պէտք չէր լինել, նախատեսնելու համար նման պատահարներ — ներկայ խառնակ, արհաւրալի ժամանակներում, երբ թիւրքական պարտաւծ բանակն ու մոլեռանդ խաժամաւժը ամենուրեք մի յարմար առիթ են փնտրում հարւածելու ոգիավուրին։ Վրէժինդիր լինելու վերջին տարւայ ընթացքում կրած անլուր պարտութիւնների համար... Եւ կոյր, անասնացած ամրոխը զարնում է բնականաբար, այն անդերում, ուր դիմադրութիւնը թոյլ է, նա տարբերութիւն իսկ չի տեսնում բուլգարի։ յոյնի ու հայի միջև, ամենըն էլ ոգիավուր են և նոյնիսկ հայը, չնայած իր լոյեալ, հաւատարիմ ընթացքին, դարձեալ ամենէն յանցաւորն է, բանի որ ամենէն տկարն է... Գայլի առաջ՝ գառը միշտ յանցաւոր է...։

Պէտք էր այո՛, նախատեսնել խուժանային այս նոր ժեստը, պէտք էր գիտնալ, որ երբ բալկանեան ժողովուրդները սկսել էին իրար ծւատել, երբ Քուլգարիան ստիպւած էր ձգել իր բոլոր նւաճած հողերը բախտի կամքին և երբ յաղթւած ու անարգւած մահիկը, ուրվանցի ու վրիժառութեան մի խօլական թուիչքավ, պիտի գար վերստին տիրանալու իր կորցրած հողերին, — նա չպիտի կամենար սանձիլ իր բնագդները, իր

աւանդական վայրենի ատելութիւնը, պիտի յագեցներ իր վրէժը քրիստոնեայ ժողովուրդների վրայ։

* *

Որբա՞ն նշանակալի և մսիթարական են այդ տեսակետից բուն Հայաստանում վերջին ժամանակ տեղի ունեցած մի քանի դէպերը... Այն առնական հակահարւածները, որ տեց քրդերին հայ ինքնապաշտպան գիւղացիութիւնը Աչ մի հայ, արգարե, չի կարող առնաց յուզմունքի կարդալ այդ սքանչելի, սրտապնդող լուրերը, որոնք ասում են մեզ, թէ ինչպէս Արձակի, Արանցի, Քեօփիրիքիօյի հայ գիւղացիք յետ են մզել բրդերի մաւսային յարձակումները, յետ են խլել յափշտակւած նախիրը, սպանել են այս կոմ այն բիւրդ դաշիճին Երանին՝ թէ այդ զւարթ, մարտաշունչ տրամադրութիւնը վրացէր բոլոր տեղերի հայերին և ամեն աեղ երկան գար հակագելու, դիմադրելու կամքն ու կարողութիւնը, որով միայն և պիտի փրկւի հայութիւնը։

Հայաստանի այդ մասնակի և խմբական հակահարւածները հազարաւոր բրդերի դէմ — դա գրեթէ նոր մի երևոյթ է, մի կազդուրիչ և փրկարար երևոյթ, որ պէտք է մտածել այս, թէ հայ հասարակութեանը, որ զլանում է իր միջոցները ինքնապաշտպան ու մարտական տարրերին և թէ այն հազարաւոր կնամարդի հայերին, որ մի երկուու ու պարսաւելի փոքրութեամբ գգում են հայրենիքը իրական ու երեակայական վանդակների հանդեպ և գահավէժ փախչում դէպի հեռուերկիրներ։

Մ. զ.

Խ Ա Յ Հ Ա Պ Ա Յ Յ

Չօտ ունիս...

Ուշ ես զնում...

Աներսին խուճանպ։

Ահա հայ կեանքի վիթիսարի խոցը, որ յայտնել է միշտ աղքային վճռական ճգնաժամերին ու կրծել, չուրացրել է ծիլ տւող յայսերը, անդամալուծել զարթնող կորովը, անյուսութեան ու անձրև է մաղել հայրենի երկրի վրայ և վերածնութեան, պայքարի աղատական կոչերը անապատի ամայութեան մէջ խեղդել։

Ինչպէս ոչխարների խրանած հօտ, ուշակորսոյ, եղեկելի, ինչպէս անասունների մի անձարակ նախիր, մութ ստրսափից խելագար, մարդիկ՝ տողի, քաջալանջ, քաջակազմ հայ մարդիկ՝ զլուխ առած, խուճապով խոյ են տալիս հայրենի աշխարհից, որպէս աւերիչ համաձարակի վայրից։

Խուճանպ է...։

Անմիտ զարչուրանքի, վատ, անարի հոգիների, ստրեարչ զգւելի գոյութիւնների խենթ խուճապը Քա-

նականութիւն չկայ, խորհող, քննող միտքը սոսկումով բռնւած գլուխների մէջ հիւծախտաւորել է ու լոել. հայրենի հողին կառուղ այնքան վսեմ ու այնքան բնական զգացմաւնքը աեղի է աւել սոսկ բռնմ, անասնական երկշութեան, որ մզում է ամենքին դուրս, հայրենի երկրից հեռու, հեռու...

Հայ աշխարհի այս գերագոյն ճգնաժամին, երբ անհատական բոլոր կամքերը, բոլոր ազիւ ճիպերը, բոլոր բարձր խոհերը գաղափարի հսկայական քուրայի մէջ պէտք է իսի ձուլէին կուռ ամբողջութեամբ անակնկալները զիմագրաւելու, ճիշտ այս գերազանցօրէն ազգային ժամին վերստին այս անարի խուճապը, այս հինաւուրց ցաւը, որ գարեր շարունակ կրծել է հայ կեանքը, մաշել ու հիւծել հայ հոգին, մրրկի թափառք շպրտել է հայորդիներին աշխարհի շորս ծայրերը աւեր ու մեռելութիւն թողնելով բաժին տարարախտ հայ աշխարհին, Ո՞ւմ առաջ թումք քաշել, ո՞ւմ ձեռքը բռնել, ո՞ւմ խրատել ու համոզել, ո՞ւմ աղերսել, ծունկի գալ առաջը, որ այս նոր ամօթանքը, այս նոր հարւածը խնայեն հայ աշխարհին. վախեցած խուժանը հեղեղ է, առջևն ինչո՞վ փակես, Ո՞ւմ փոյթն է, որ գաղթերը և միայն գաղթերն են ազգեր կործանել. ո՞վ կարող է խորհել, ըմբռնել այս ճակատագրական ճշմարտութիւնը, երբ զարհուրանքը, որպէս հազարգլխեան ճիւաղ, իր ճանկերն է թաղել մթագնած ուղեղների մէջ, ճմլում, բզկտում է անարի հոգիները, ծւատում, կրծոտում է նրանց հանգիստը գիշեր ու ցերեկ և մտրակում ոտքի է հանում միսիայն փախստի ճամբան բռնելու համար

Աւ փախչում են հատ հատ, զոյգերով, տասնեակներով, հարիւրներով, հազարներով վատարախտ աշխարհի բոլոր ծայրերից. Անձայն, համր մի կոչ, մեղմօրէն, որպէս համաճարակը, սողում, թափանցում է հայ երկրի բոլոր անկիւնները և դուրս է բաշում մարդկանց ձորերից ու դաշտերից, հեռաւոր մենաւոր խրճիթներից և մարդաշատ բաղաքներից, շնչում է նրանց մահացու սարսափը, մշուշապատ երևակայութիւնները բորբոքում հրեշտառ պատկերներով. երկինքը բռնոր և հողը երերուն դարձնում ոտքերի տակ, մարդիկ շատապով լքում են հայրենի յարկ ու յուշեր, տուն ու տեղ, արտ ու անդաստան, անխնայօրէն կտրատում են մայր երկրի կրծերին մեզ կապող բիւրաւոր երակները, ու փախչում են, փախչում են...

Ի՞նչ անել, ի՞նչպէս արգիլել...

Կ'ուզէի դիւթական կարողութեամբ խօսքի կոչել հայ աշխարհի սար ու բար, ձոր ու այր, որ բոլորը միանգամից որոտային. ո՞ւնք առեք, ո՞վ գժբախտ անարիներ. կ'ուզէի երկների շանթերն ունենալ ձեռքիս և կայծակի անձրեսով խուժապած խուժանի առաջը փակել. կ'ուզէի ծովերը փոթորկել և կատաղի յօրձանքներով յետ շպրտել փախստականներին դէպի հայրենի ափերը.

Կ'ուզէի մարգարէի պէս երկնըի կրակն ունենալ չըրթունքներիս այդ անզգայ, բթացած սրտերում հրդեհներ վառելու. կ'ուզէի...

Բայց ի՞նչ, այդ բոլորի փոխարէն իմ ցաւատանը երեակայութեան առաջ նորից ցցւում է խուճապած խուժանը — ես տեսնում եմ ուռած երակներով այդ ձգւած պարանոցները, այդ գունատ, անարիւն դէմքերը, ուր ոչ մի ջիզ չի շարժուում, այդ գոզդող ըրթունքները, այդ սարսափից բարացած հայեացքները, որոնք շշշակի նայում են տարածութեան մէջ անմտօրէն ու բռնմ, առանց ոչինչ տեսնելու ԱՌ, այդ փախուստը սար ու քարով, ձոր ու գաշտով, ամայի, գաղտնածածուկ վայրերով, աչքերից հեռու, խոտոր, անմարդ տարապարներով, մերթ ծնկաչոր ժայռերի թիկունքին, բարերին ծեփւած, լոյսն անիծելով ու խաւարին կարօտ, մերթ մացառների տակ կծկւած, կամ այրերում ու խորշերում թաքսոցի հետամուա. մերթ շունչերը բռնած ու սոզալով, մերթ թաթերի ծայրին ու զգոյշ և միշտ զարհուրանքը, անբացատրելի ու ահաւոր զարհուրանքը թիկունքներին, որպէս հսկայական շղիկ ու փախչում են, փախչում են, այն ի՞նչ ձայն է ձորում, ո՞վ խօսեց ահա այս ժայռի յետեից, մացառի միջից, ո՞վ բռնուցք ցոյց տւեց, այս քարերի մէջ ո՞վ է շշչում, եկան արդեօք, մօտ են, հասա՞ն... և փախէ՛ր, փախէ՛ր...

ԱՅ, ի՞նչ անկում, ի՞նչ ոչնչութիւն, ի՞նչ աւերած.

Մարգարէ չկայ, հրեղէն խօսքով, մայր երկիրը խորհում է ցաւագին ու անմռունչ, կայծակէ անձրեւը հին հեքիաթ է, իրականը, ամենազօրը այս անբացատրելի, խուժանային սարսափն է, այս ուշակորոյս վազքը գէպի օտար հօրիզոնների

Եւ իմ ձայնն անզօր է և իմ գրիչը խեղճ, ձեր խուճապի առաջ պատւար հանելու, ձեր հոգիներին իշխող սարսափը վանելու, ձեր սրտերի մէջ արիւթեան բարզամից կաթիլներ թափելու, ո՞վ անարիներ, ո՞վ վատեր եւ ինչո՞ւ փորձել կասեցնել ձեզ, ինչո՞ւ կապել ձեր ուաքն հողին, որը պաշտապանելու արիւթիւն չունեցաք երբեք, ձեր խրճիթներին, որոնց յարկերի առկ շարունակ դողացիք ցածրէն, ձեր ընտանիքներին, որ վատօրէն յանձնեցիք քիւրդ ու թիւրք աւազակների պագչոտութեան երկչուա ու վատ, գուք ձեր սեփական զաւակների հոգում միայն սարսափը, ստրկութեան զգացմունքը սերմանեցիք, համակերպւելու, անիրաւութիւնը անասնօրէն կրելու, չարիբը տոկալու անարդ ու ստոր աւանդութիւնները կերտեցիք: Եւ քանի որ այժմ հայ աշխարհի զարթնումի օրերին գուք ստորոգի փախուստը գիտցաք որպէս միակ արժանին ձեր եղեկի գորութեան, քանի որ ազգային այս եղակի ճգնաժամին դուք՝ հինգ գար շարունակ գուշմանի ուաքը շան պէս լիզողներդ, գէթ գարձեալ հինգ ամիս տոկուու արիւթիւնը չ'ունեցաք, հայրենիքը կարող է ձեզ ասել. ո՞վա-

ինէք գուք բոլոր անարիներդ, բոլոր վատերդ, բոլոր ստորաքարշ երկչուներդ^ա:

Փախէք և տարեք ձեզ հետ ձեր անարդ երկչունութիւնը, ձեր մշտական սարսափը, ձեր գունատ դէմքերը, ձեր բութ հայեացքները, ձեր դողդուն, միշտ աղերսող բազուկները: Հայ աշխարհի փըրկութեան մէջ գուք դեր չունիք: Անարժան էք դուք, որ հազար սերունդների արիւն բրտինքով ցաղւած հողն էք յանձնում գուշտունին առանց պայքարի, բան դարերի հայրենիքն էք յօշուում և նրա պատառները — արիւնաթաւ, թրթուուն միս, ձեր անարդ ուների հետ, ձեր անարժան կրունկներին կապած՝ քաշ էք աւալու օտար աշխարհներ, որպէս աշտառ լամ, տրուբելով ու պղծելով մեծ ճամբաներում: Անարժան էք դուք, որ Հայ աշխարհի յօյսերի նւիրական սափորներն էք փշրում և ծաղկող աճիւնները չորս հողմերին յանձնում:

Փախէք... միայն զգոյշ, մի անցէք այն նւիրական վայրերով, ուր բամիների խենթ սուլոցի տակ, հանգչում են զետուներն ու Մարտինինը, Աւետիսեաններն ու Վազգէնները, Սերոր ու Գէորգ Զաւուշ, Արարո ու Ցարոնի առիւծ Սերոր իր զոյգ կորիւններով ու բոլոր նրանք՝ անյայտ ու յայտնի, որոնք մի օր ընկան ձեզ համար, ձեր ճակատից ստրկութեան ամօթը, ձեր թիկունքից բռնութեան անարդ բեռը, ձեր պարունցներից անասնութեան լուծը վերցնելու համար: Զգոյշ, մի խառնէք այդ նւիրական հողերը ձեր անարդ ուներով, մի խռովէք հանգիստ անզուգական նահատակներին:

Փախէք, բայց զգոյշ, Թաթերի ծայրով, թող հանգչն նահատակները, ձեր ուների դզրդիւնը թող շխոռովի նրանց բունը, ապա թէ ոչ, նորից ոտքի կելնեն իրենց վիթիւնարի հասակով, ձեր առաջ կը ցցին ու կը մռնչան:

ԴՓախէք, ահա մենք ոտքի ենք նորից մեռնելու ձեզ համար^ա և իրենց հայեացքի բոցով կը խարանեն ձեր ճակատները:

Եւ ժամանակն ու օտար հողմերը անզօր կը լինին ջնջել այդ խարանը ձեր դասալիք ճակատներից:

ՏԱՐԱԴԻՐ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՍՈՒՐԻԱ-ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ահա կնճիռ մը, դժւարութիւն մը ևս, որ արդէն խոշոր և վտանգաւոր հարցի մը համեմատութիւնները կըստանայ, թիւրքիոյ տարաբախտ հորիզոններուն մէջ, ուր բաղաքական մտահոգութիւնները, շնորհիւ շրջապատող պայմաններու բեղմնաւոր յարմարութեանց, կը ծնին ու կ'ուռաձանան արագ այնքան, որքան բռւսեարը հասարակածային երկինքներուն տակ:

Սուրիա-արաբական հարցը, որ կուգայ էջ մը ևս բարդել օսմանեան պետութեան սէաթոյիր տարեգրութիւններուն վրայ, բոլորովին նոր հարց մըն է: — նոր ո՛չ հարկաւ իր ծնուցիչ պատճեն է բարեկան մէջ, որոնք մեծ մասամբ հնամենի են որքան Ալ-Օսմանի Պետութիւնը նոյնինքն, ինչպէս պատճառները բոլոր միւս նմանօրինակ խնդիրներուն, ո՛չ, այլ նոր է այդ սուրիա-արաբական հարցը գլխաւորաբար իր կ աշմաւութուն մով, ծագում մով շնուռուած անցեալ 1912 տարւոյ վերջինը պալքանեան սարսափիներու ուռաջին կատաստրօֆներուն հետ, սուրիա-արաբական հարցը ունի ուրեմն գեա հաջիւ ութնամատույ պատճեն թիւն մը. բայց ահա արդէն կանգնած, հայկական արիւնատանջ մզձաւանջի կողքին, ինքն ալ, մահասիրուա սպառնալիքի մը նման օսմանեան հայրենիքի անդիսակից և անհեռատես պաշտպաններուն յանդիման:

Երդարեւ, պէտք չէ սուրիա-արաբական հարցը շփոթել այն անդադրում ապստամբութիւններուն հետ, որոնք նման մշտաթարախ պալամիր մը փակցուցին և չքացուցին օսմանեան իշխանութեան հեղինակութիւնը հարսիր Շռովի արևելեան ամբունքին և ամբողջ թերակզնիին վրայ, մինչև Հնդկական Ովկիանոս, ղեկավարութեամբ աշխարհածանօթ Խմամ Եռհային և Աւելիս Խորիսին, ապստամբութիւններ, որոնք բամեցին հայ բամեցին թիւրք զինուրական երիտասարդութեան արիւնը և որոնց ամբողջութիւնը կը ճանչնայ պատճեն թիւնը Արաբական հարցը չունի Խորիսներու և Էահիանիներու հարցին հետ ոչ մէկ ուղղակի կապ, ո՛չ ծագման, ոչ բովանդակութեան անսակէտով:

Յետոյ, պէտք չէ սուրիա-արաբական հարցը շփոթել նաև Լիբանանի խնդրին հետ ըսկնք այսօր իրաւական տեսակէտով Լիբանանու խնդրին զունի Լաւ թէ գէլ կայ, 1861-Էն ի վեր, Թիւրքիոյ արդ գաւառին համար յատուկ օրէնդրութիւն մը երաշխաւորւած երրովական վեց մեծ պետութիւններէն, որ թէկ ժամանակի ընթացքին ենթարկւած է կեդրանական կառավարութեան ունագութիւններուն, բայց որ անցեալ տարի ֆրանսական կառավարութեան նախաձեռնութեամբ Թիւրքիոյ արտաքին գործոց նախարարութեան և մեծ պետութիւններու գետպաններուն միջև կնքւած փրօթօկոլով մը (23 գետեմբեր 1912) ստացաւ նորանոր ընդլայնումներ և կրնայ հիմա որոշ չափով բաւարարութիւն տայ տեղական բնակչութեան ընկերային և անտեսական զարգացման կարիքներուն:

Գործնականին մէջ, սակայն, լիբանանցիք իրենց հարցը փակւած չեն նկատեր տակաւին և կը շարունակին սնուցանել իրենց համար նորանոր իդէալներ..

Խնդիրը այն է որ ինչ որ սուրիա-արաբական հարց

անունով երևան կուգայ, այսօր չեն նաև լիբանանցի-
ներու ալդ իդէալները *):

Այսպէս, ուրեմն, սարիտարաբական հարցը անջատ
Արարիոյ խնդրէն, անջատ նաև լիբանացւոց տենչանբ-
ներէն, նոր, ինքնուրոյն հարց մըն է իր յատուկ նկա-
րագրովը, կոչւած խաղալու իրեն յատուկ կարեօր գերը
Ասիսկան Թիւրքիոյ առեղծւածին պարզման գործին մէջ
և, հետևաբար, տրժանի առանձին նկատութեան և
հիմոնի վերլուծան:

Ճիշտ է, անիկա չունի առկաւին, ինչպես զոր օրինակ
Հայկական Հարցը, ունէ *juridique* հիմք, ոչ կայսրու-
թենէն դուրս, ոչ է կայսրութենէն ներս, — ճիշտ է որ
դեռ ոչ մէկ միջազգային համաձայնութիւն, *convention*,
կամ վեհապետութեան արտօնութիւն, փէ ըման, չէ
եկած նւիրագործելու զայն օրինական տեսակետով, բայց
պէտք է գիտնալ թէ այն պահուն իսկ, ուր որս տաղերը
կը գրենք, պաշտօնական բանակցութիւններ կը կատար-
ին Փարիզի մէջ թ. Դրան կողմէ զրկած պատկրակի
մը՝ Աերեզի նախկին երեսփոխան և յայտնի իմթիհա-
տական Միտհատ Շուքրի պէյի և սուրբիաւորաբական
շարժման ամենաազդեցիկ զեկագործերուն՝ Ապահով
Համբաւ պէյ Ել-Զէօհրապիի, Մուխթար էֆէնտի Պա-
յուսի և այլն միջն. իրենք ու հասկաց զուգաւոր թէ եան
մը (*entente*) գոլու նպատակով իրապես մենք չենք
կրնար հասկնալ թէ ի՞նչ կարող է նշանակել իրերա-
համացողութիւն եզրը այսօրինակ պարագաներու մէջ
երբ յատակ-շօշափելի վէրբեր կան հրապարակ դրւած
իրենց համապատասխան դարմաններն ալ միասին Մեր
ըմբռնումով այսօրինակ պարագաներու մէջ իրերահաս-
կացողութիւնը մէկ տեսակի կրնալ ըլլալ — այն է ցոյց

*) Առւրիսա-արաբական հարցին և Լիբանանի մարզնիքը ներու ցարդ շիրականացած պահանջներուն մթիւ այս տար-սրոշումը խիստ կարեւոր է մեր ուսումնասիրութեան առար-կային վրայ պէտք եղածին շափ պայծառ լոյս մը սփակելու անսակէւթէն։ Արդիչեակ, սմանը, —և այս միտքը յշացողները դիմաւորաբար լիրանանցիներ են անկասկած ու զայն մշա-կովները՝ Գրանիսիի մէջ դաշիմային բաղաբականութեան տենդու կուսակիցիներ, —ուզեցին ենթադրել, որ սուրբիա-արաբական նորածագ հարցին ամենաքանաւոր լուծումը կրկնու է ի բառ անու ի նը ան զ ա ր օ ր է ն ո գ ը ո ւ թ ե ա ն ը ն զ ա ր ձ ա կ ո ւ մ ը ա մ ը ո զ ը Ա ո ւ ր ի ո յ զ ը ա յ ի բայց ինչքան մենք զիսենը, սու-րիա-արաբական հարցին զեկովոր տարրերը դիմովին հա-կառակ են այդ օրինակ կարգադրութեան մը, որովհետեւ չեն ուզեր անջատողական տրամադրութիւններ ունենալու մասին ամենագոյն կասկածը հրաւիրել իրենց վրայ և, երկ-րորդ, որովհետեւ սուրիա-արաբական հարցին բավանդակու-թիւնը չի առջանափակիր միայն Առւրիսա աշհանգին պա-հանջներուն մէջ։

Հիրանդանի ու սուրբառ-արաբական հարցերու փոխարարեցին յամին տեսնել „Les Réformes en Turquie d'Asie“, par Ludovic de Contenson, Paris, 1913. էջ 87 և յաջորդակառ:

տրւած գարմաններուն կիրարկումը խնդրոյ տապրկալ
ցաւերուն Այս է արդէն պատճառը, որուն համար
մենք պիտի չմտնենք այդ բանակցութիւններու քննու-
թեան մէջ, միայն թէ կ'ուզենք այս առթիւ շեշտել
մեզի համար կարեոր սա կէտին վրայ, որ ինչ ալ ըլլայ
յիշեալ բանակցութիւններու արգիւնքը, դրական թէ
բացասական, սուրիաւ արարական հարցը դուրս պիտի
գոյ այդ խօսակցութիւններէն վերակենդանացած, աւելի
Ներսոյ և կենտունակ գարձած, իր գոյութեան
իրաւունքը արդար առջունութեած:

• • •

Սուրիա-արաբական հարցը, ինչպէս կ'ըսէինք, ի յայտեկաւ գլխաւորաբար պալքանեան աղետներուն վազօրդաշնին Զանազան բաղարագէտներ հիմնելով այս փաստին վրայ, ինչպէս և նկատի ունենալով այն հանգամանքը, ըստ որում սուրիա-արաբական շարժումին զեկովարներուն մէջ կան մեծ թւով իսլամներ, կ'եզրակացնեն որ ալպանական խնդրին ծանօթ կարգադրութիւնը եղաւ սուրիա-արաբական հարցին ծագման գլխաւոր ազդակը։ Առորիոյ իսլամ արաբները — կը սրամութանեն անոնք, — տեսնելով որ իսլամ ալպանացիները ո'ևէ կրօնական թէ ընկերային արգելք չտեսան իրենց քրիստոնեայ ազգակիցներուն հետ քաղաքական համագործակցութիւն ստեղծելուն, ըմբռնեցին շուտով, որ ազգային ինքնորոշումը և քաղաքական բարեկեցութիւնը երեսյթներ են, որոնք պէտք չէ ուզզակի կրօնական ներգործութիւններու ազգեցութեան տակ իրենն, ապա և անմիջապէս ձեռք մեկնեցին իրենց այլակրօն. բրիսուոննեայ թէ հրէայ գրացիներու և ցեղակիցներու արգեն պատրաստ արամադրութիւններուն և սուրիա-արաբական հարցը ծնաւ։

Այս մեկութիւնը սուրբիա-արքաթական հարցի ծագման պատճառուներու մասին մեր կարծիքով շատ մակերեսային է։ Մեր կարծիքով պալքանեան պատերազմը և անոր հետեանք աղպանական փրապեմին լուծումը խաղացին միայն *ποτίσ-*ի, շարժառիթի գեր սուրբիա-արքական հարցին մարմառուման գործին մէջ և ամենաշատը ծառայեցին սուրբիա-արքացիներուն մօտ գիտակցութիւնը հասունցնելու, Խոկ իրենց հարցին բովանդակութիւնը, իսկական պատճառները կազմող ցաւերը, — աւելորդ չե՞ ոլ կրկնել և ապացուցել հասարակ տեղիք դարձած իրողութիւններու մէջբերումով, — իրենց բունակը ունին, ինչպէս Թիւրքիոյ բոլոր ժողովուրգներուն ցաւերը, — գարե ի գար օսմանեան պիտութեան զեկը իրարու փոխանցող սերունդներու անհոգութեան և բաղաբագիտական իմաստութեան զգոյութեան մէջ, անհոգութիւն և անբաղաբագիտութիւն՝ որով անոնք երկրագունդի լաւագոյն մասերէն մէկը, որ կը գտնւէր իրենց

ձեռքին տակ, դարձուցին աւազան արեան և արտասուրի, բոյն գիւային անարդարութեանց, մռալլ ոգիւութեան և սովոր:

Ահա՝ այժմ սուրիա-արաբական հարցին համառօս և բոլորպին առարկայական մէկ պատմականը^(*):

1912-ի աշնան, Քառեակ Զինակցութեան և Թիւրքիոյ բանակներուն միջև տեղի ունեցած առաջին ընդհարութեան իսկ սամանեան մեծահամբաւ զինուորականութեան ամօթալի ջախջախումը բրիտանեաներու ազատաշունչ գրոհին դիմաց, ինչպէս ամենուրեք Թիւրքիոյ մէջ, նոյնպէս և սուրիական բրիտանեայ ժողովուրգներուն մաս առաջ բերաւ ոչ միայն խորունկ զարմանք և հիասթափութիւն, այլ և բնազդային, անկազմակերպ, դրեթէ տարերային ըղձանք մը նմանելու անոնց, աղաւագրող Մակեդոնացիներուն, Անբակերուն, Յոյներուն...

Այդ միջոցին Պոլսոյ մէջ նախարարապետ էր ծերունի Քեմիլ փաշան որ՝ Հնարամիս դիւնադէտ՝ շատերուն յաջողած էր հաւատացնել ինքինքը իրեն կուսակից ապակեդրունացեալ վարչութեան: Միեւն Հնարամութեամբ, Քեմիլ փաշա, Սուրիոյ մէջ ծայր տուղ խճորումին նկամամբ վարեցաւ ճշմարիտ պետական մարդու ըրջահայեցութեամբ: Աչ մէկ կերպով չարտայայտեց անխովքը, զոր իր մաքին ու սրամն մէջ կը զարթեցնեին հինգ-հարիւր տարիներէ ի վեր յոյլ ու բնաթամախ մացած ահերքիոյ այդ թերեւ միակ երկրամասին վրայ ևս գծադրուի սկսող դժգոհութեան շարժուձեւը, հայրենիքի այն դժբախտ ու սգաւոր օրերուն^(**): Ըստ Հակառակը Քեմիլ փաշա ինքնավստահ, զբեթէ լոցտական հանգարտութեամբ մը մէջանդ նետեց անմիջապէս, ի պատասխան սուրիացւոց յուղութերուն, բարենորոգչական արամազրութիւններ իր կողմէն (Պետերեր 1912): — Քեմիլ փաշան ծանոյց, որ շուտով պիտի մշակուի նահանգային նոր օրէնք ապակենուրունացան սկզբունքին վրայ հիմնած և պիտի ընդլայնւին աեզական իշխանութեանց իրաւասութիւնները:

Սուրիացիները խանդավառ ոգեսրութեամբ ողջունացին այս բարեցակամ վերաբերմունքը կուսափառւթեան կողմէն կողմէ, իրենց կուսակալը Էտհէմ պէյ, անդամ Իմրիաֆ կուսակցութեան և հետևաբար ինքն ալ իրեն թէ կողմակից ապակեդրունացման, չժարոյց ու է արգելք շարժման ընդարձակումին և ինդրին բնոյթը ընդհուպ փոխւեցաւ Մէկ կողմէ շիջեցան բրիտանեայ

* Bulletin du comité de l'Asie Française, Paris, Mai 1913—. Les Réformes en Syrie.

**) Պ. Աբկաս թէուր 1912-ին La France dans le Levant Ֆիթին վրայ առաջ իր կոնֆլիքտին մէջ կը տէր: — Հար և մէկ-բառորդ դարս ընթացքին, Պոլսոյ առումն մինչեւ անցեալ տարի, երբէք թիւրք կայսրութիւնը շտեառ կաթլիկ ապասմանութիւն մը, 1911-ին է, որ առաջին անգամ Անբիւ-Ալյանսից մէջ կաթոլիկ ժողովուրդ մը զէնք վերցուց սուլթանին գէմ:

Բ. Շ.

սուրիացիներու ազատագրութեան սկզբնական երազները, միւս կողմէ ծնաւ ու հրաշալի արագութեամբ զորացաւ բարենորոգչական ըղձանք մը, որ ամենակարճ ժամանակամիջոցի մը ընթացքին խոշոր նւաճումներ ըրաւ հասարակական բոլոր խուերուն մէջ առանց կրօնի ցեղի ու գասակարգի խարութեան — Խալամեները, որոնք կը կազմեն մեծամասնութիւն այդ շրջանին մէջ, անցան շարժման գլուխը ու խոստումներով չբաւականալու: Հաստատ մատղրութեամբ Պէյրութի խլամ ամենայարանի ընտանիքներէն մէկուն պետը Մուխթար էֆենասի Պայում շարաննեցաւ հեռագրով ազգարարելու: Պոլսոյ կառավարութեան, որ սուրիացիները բարենորոգումները և որ նթէ իրենց օրինաւոր պահանջները նկատի չ'առնելին որոշած են իրենց դիմուն ձարը նայիլ...

Եւ խօսքէն գործքին անցնելու համար սուրիացիները երկար շապանեցին: Դեկտեմբերի վերջին օրերուն Պէյրութի նահանգին մէջ ժողովրդական բւեարկութեամբ ընտրւեցան պատգամաւորներ ընդհանուր ներկայացուցչական ժողովի մը համար, որ պաշտօն պիտի ունենար զբաղելու բարենորոգումներու: Հարցին վերաբերեալ բոլոր խնդիրներով: Ըսդհանուր ներկայացուցչական այս ժողովին պատգամաւորները՝ թւով 86 հոգի^(*)՝ իրենց առաջին լիովանար նիստը գումարեցին 12 յունար 1913-ին Պէյրութի Քաղաքապետարանի մէծ սրահին մէջ: Ըստ իմաստալից որոշումով մը մի աձայն ու մթեամբ նսխագահութեան կոչեցաւ խլամ շեյխ Ահմետ Ապահար անօրէն Օսմանիէ վարժարանին, որտէ անմիջապէս յեռոյ ժողովը հանդիսաւոր կերպով յաւարարեց բարենորոգումներու անմիջական անհրաժեշտութիւնը և նշանակեց 25 հոգիէ: — 12 խլամ, 12 քրիստոնեայ, 1 հրէայ, — բաղկացած կօմիտէ մը ուսոււնասիրելու: Համար իր կարգին պաշտօնական բարենորոգումներու ծրագիր մը, բայց երկու ժողովներուն միջև շիային մատենլակերպի հիմնական ասրբերութիւնները, անանկ որ բազիսումներու հնարաւորութեան մասին երևակայողներ գոյութիւն իսկ չունեին Պէյրութի մէջ բարձրացող համերաշխութեան և ոգեսրութիւնները:

) Այս 86 պատգամաւորները՝ ընտրւած կրօնական համեմատկանութեան հիմն վրայ՝ կը բաժանեէին այսպէս: — 42 խլամ, 16 օրթօգ.քա, 10 մարօնիմ, 6 յոյն-կաթոլիկ, 2 լատին, 2 հայ-կաթոլիկ, 2 հայ-լուսաւորչական, 2 ասորի, 2 բողոքական և 2 հրէայ:

Բ. Շ.

րութեան ալիբը կ'երթար ընդհարիէ շը ջակայ նահանգ-ներու, Դամակոսի, Հալէպի գեռ թմրամած տրամա-գրութիւններուն և ամենուրիք կ'արթնցնէր բարենո-րոգման նոյնպիսի փափագներ և պահանջ...

Բայց ահա՝ հասաւ յունար 23-ը իր պետական Հարւածով: Նազըմ փաշան սպանւած, քեամիլը փա-խրստական, աբորական... լառափարութեան բազմա-չարչար զեկը դարձեալ նոր ձեռքերու մէջ և պետական նաւուն ուղղութիւնն ալ բնականօրէն անգամ մը ևս փախած աջէն մինչև ահեակ.. Պէյրութի վազին պաշ-տանանկ և անոր յաջորդ նշանակւած նոր հոսանքի կողմանից Հազիմ պէյ ու վերջապէս ընդհուպ բացւած անսահման ասպարէզը խօսկան հաշւեյարդարութե-րուն, զապութերուն:

Պէյրութի կօմիտէն ջանաց չկորսնցնել իր սառնա-սրաւութիւնը այս ընդհանուր յեղաշրջութեան մէջ և երբ ամբողջացաւ պատրաստութիւնը իր ձեռնարկած բարենորոգչական ծրագրին, զայն վաւերացնել տաւ նահանգային ընդհանուր պատգամաւորներու ժողովին և հրապարակ ընծայեց արտրերէն, Թուրքերէն և Քրան-սերէն լեզուներով և հետեւալ տիտղոսով. — «Ծրագիր բարեմորգմանց զործադրիի Պէյրութի վիլայէթիմ մէջ, ընդումած զամազամ նախարակութեանց ընտրական մար-միմներու կողմէ, ըստրած 86 ամդամներու ընդհանուր ժո-ղովիմ 3-րդ միստիմ մէջ, 31 յունիար 1913-ի ուրբաթօրը»:

Սակայն նոր վալի Հազիմ պէյը շատ ջուշացաւ... Հազիմ պէյ, Պէյրութի իջաւ մարտի սկիզբներու Ամիս մը ետքը, ապրիլ 8-ին Բարենորոգչական կօմիտէն նիստի մը պահուն հրահանգ ստացաւ ոստիկանութենէն ցրւելու և փակելու ժողովասեղին շետեանը՝ խորունկ հիամ-թափութիւն և ցնցում ամրազ ժողովարդին մէջ Յա-ջորդ օրը, 9 ապրիլ բոլոր բարենորոգչական թերթերը հրատարակեցան սեածիր շրջանակւած, իրեւ միակ բովանդակութիւն հրատարակելով կօմիտէի լունման հրամանագիրը: Փակւեցան բոլոր վաճառատուները և բողոքի դիմութերն ու հեռագիրները տեղացին դեպի վալին ու Բ. Դուռը Ապրիլ 11-ին Հազիմ պէյ մունե-տիկներու միջոցով ծանոյց, որ նահանգներու նոր օրէնքը պատրաստ է ալ գէն գործադրութեան դրւելու համար և ժողովուրդը կը հրաւիրէ վերսկսելու իր բնականու կեանքը:

Անօգուտ Քաջարը շարունակեց մնալ դիակի պէս անշարժ: Հազիմ պէյ դադրեցուց այն տաեն բոլոր իս-լամ բարենորոգչական թերթերը, ձերբակալեց մէկ քանի պարագուները, զորս չարձակեց մինչև որ կօմիտէն յանձնառու շեղաւ պօյրութը դադրեցնելու (ապրիլ 13):

Նոյն օրը հասաւ սակայն նաև վարչապետ և պատե-րազմական նախարար Մահմետ Շէքքէթ փաշայի մէկ հեռագրական հրահանգը, որով կը յայտարարէր թէ ողանազան բարենորոգութերը շնորհւած են արդէն և որ եթէ պէյրութցիր ուրիշ պահանջները ունին տակա-

ւին, պէտք է զիմեն փարլամենտին, որովհետեւ ուեկ տարբեր միջոց հակառակ է Ասհանաղբութեան: Պօլոյ, երբեմի ազատարարին հեռագիրը կը վերջանար յարելով որ ոզինորական իշխանութիւնները հրաման ստացած են պատերազմական ատեանի առջև երկու ժամանակամիջութեան մէջ դատելու ամեն անոնք, որ ապօբէն ցոյցեր կ ընեն»:

Եւ պէյրութցիները լուեցին սարսափահար: Ոչ բա-րոյապէս տրամադիր, ո՛չ ալ Փիզիբապէս պատրաս-տապատճերութեան դրօց բարձրացնելու, պէյրութցիները համակերպեցան նախարարապետական սպառնալից և ահարեկող հրահանգին... բայց չփհասեցան ոչ ալ զի-նաթափ եղան:

Ժողովրդական խաւերու հոգեբանութիւնը վաս հա-զորդիչ է բաղաբական յուզումներուն, ինչպէս անդըն-դախոր ովկիանը զերմութեան:

Պէյրութցիները շարունակեցին կառչած մնալ իրենց ձեւորած պահանջներուն, որոնք հիմա նման բոլոր հալածական գաղափարներուն սկսեր էին դառնալ աւելի նւիրական և թանկագին և աիրապետել Փոքր-Ասիոյ հարաւային շրջաններու ամբողջ ժողովրդին մտայնու-թեան, մինչև իրագ և Պաշտամ, ու մասամբ նաև Էկմէն ու Հիճազ:

Այդ տաեն և որ ծնաւ նոր աւելի մեծ ընդհանուր ժողովի մը գումարման միաբը և որովհետեւ Հայրենիքը չեր բաւեկանին թոյլատու և սապնջական իր հարազատ զաւակներուն համար, սուրիացիներն ալ պարտաւորե-ցան յառել իրենց աշքերը գեպի արտասահման: Այս-պէսով է որ Թիւրքիան ձեռամբ իր անհեռատես և քաղաքագիտական իմաստութենէ գլխովին զուրկ պե-տական վարիչներուն ստեղծեց Փարիզի սուրիա-արա-բական Քոնկրէն և միջազգային զոյն ստանալու վասնգին հնթարկեց այն էտպէս ներքին հարցը, որ եր սուրիա-արաբականը *):

Փարիզի սուրիա-արաբական այս անդրանիկ Քոնկրէն գումարեցաւ 1913 յունիս ամսաւ ընթացքին Պէյ-րութէն, Դամակոսէն, Երուսաղէմէն, Մու-սուլէն, Պաղտատէն, Պատրայէն և ուրիշ արաբախոս շրջաններէ ընտրած ամեն կրօնի, ցեղի ու դասակարգի պատկանող բազմաթիւ պատգամաւորներու մանակցու-թեամբ:

Քոնկրէին աշխատութիւնները չակեցին երկար, որով-

*) Փարիզի Քոնկրէին մասնակցող սուրիացի իսլամ կարելու պատգամաւոր մը, նոյն ինքն յայտնի Մուխթամար Էֆենտի Պայուս, վեր առնելով այս Քոնկրէի նշանակութիւնը, ըստ որ մէկի որ եթէ իրաց ներկայ կացութեան առիթով մեղաւոր մը կայ, այն ալ մըր կառավարութիւնն է: Մենք սուրիացի բարենորոգչականները ցարդ հաւատացած էինք, որ բարենորոգութեանները միայն Պօլոյէն կրնան գալ կառավա-րութիւնը ստիպեց մեզ համազւելու, որ նոյնպիսի նպատակ-ներով կարելի է զիմել նաև այլուր:

Հետեւ գրեթէ չկային սկզբունքային տարակարծիքութիւններ, որոնք գուռ բանային հասարակական խնդիքներու նկատմամբ ըստ եռութեան վիճաբանութիւններու, մասց որ պատգամաւորներու չնշին մէկ փոքրամասնութիւնը հագին կը ներկայացներ մատորական և փորձառական բաւականացափ պատրաստութիւն և ընդունակութիւն բազմակողմանի քննութեան ենթարկելու քաղաքական և ընկերային խնդիքներ:

Այսպէս Քոնկրեին աշխատութիւնները աևելով միայն
մէկ-բանի օր, վերջ գտան յառնիս 21-ին բէտրկու-
թեամբ մէկ բանի որոշումներու, որոնք չեն կազմել
ամբողջական պատասխաններ բոլոր այն խնդիրներուն,
զորս կը բովանդակէ սուրիա-արաբական շարժումը, այս
դիրէկտիվներն են այն ուղղութեան, որուն պիտի
հետեւին այդ շարժման զեկավարները գտնելու համար
լուծումը իրենց ներկայացուցած ժողովուրդը մատառ-
ջող հոգսերուն:

Ահա՝ այդ որոշումները.

1.—Արմատական և ստիլոզական բարենորոգութեր անհրաժեշտ են Օսմանեան կայութեան մէջ:

2.—Պէտք է սամանցի արաբներուն ապահովել իրենց քաղաքական իրաւունքներուն կիրարկումը անոնց մասնակցութիւնը կայսրութեան կնդրուական վարչութեան մէջ գարձնելով իրական:

3.—Պէտք է արար և ուղիղական զանազան վիլայէթներէ իւրաքանչիւրին մէջ հաստատել ապակեղբանացեալ ուժին մը համապատասխան տեղական կարիքներուն և յարմարութիւններուն:

4.—Պէլարութի վիլայէթը իր պահանջները բանաձեռնութեան մասնաւոր ծրագրի մը մէջ, որ քէտարկեցաւ. 31 յունիսի 1913-ին յատակ ընդհանուր ժողովի մը կազմեն, — ծրագրի՝ հիմնած վիլայէթին Ընդհանուր Խորհուրդին իրաւասութեանց ընդարձակման և օտար խորհրդականներու անւանման կրկնակ սկզբունքներուն վրայ, — Քննկրէն կը պահանջէ անոր գործ ադրբեյթիւնը:

5.—Ապարերէն յեզուն պէտք է ընդունի սամանեան փար
լամէնժին մէջ և նկատի պաշտօնութիւն յեզու սուրբիակա
և արար երիբոյն եռուն մէջ:

6.—Զինուորական ծառայութիւնը, բացի ծայրայեղ անհրաժեշտութեան պարագաներէն, պիտի բլայ տեղայի սպառեած է առաջ մերձական մէջ,

7.—Քանիրէն կը յայտնէ իր բաղձանքը, որպէս զի օս կայսերական հառավագութիւնը ապահովէ Լիբանանու Միթէսարքի Փաթեան Համար իր եղեմուական կացածիւնը բարեխաւելու միջացները:

9.-Աերկայ սրոշումները պիտի հաղորդեին օսմ. կայսերական կառավարութեան:

10.—**Նոյն որոշումները պիտի հաղորդվին նաև սամանեակալութեան բարեկամ պետութեանց:**

11.—Քանիքէն կը յայտնի իր Ֆերմ շնորհակալիքը Հարաբետական կառավագարա թէ եան (Քրամասյի) իր վեհանու առաջնական թէ եան Համար

Бареліңнаның мәдениеті.

1.—Այնքան առենք որ այս Քանիկելի կողմէ ըւետրէւած որոշութեար գործադրւած չեն, ինչպէս որ պէտքն է, աբար և սուրբական բարենորոգչական կոմիտեներու անդամները շպիտի կրնան օսմանեան կայորութեան մէջ ունեն պաշտօն ստանձնել առանց իրենց պատկանած կոմիտէի յատու կ արտօնութեան:

2.—**Աներկայ** սրուշութերը պիտի կազմեն սամանցի սուբրիացիներու և արաբներու քաղաքական ծրագիրը, քարլամենթական ընտրութիւններու առեն, ունեն թէ եկածու, որ կանխու յանձնառու չըլլար այդ ծրագիրը պաշտպանելու և անոր գործադրութիւնը հետապնդելու, պաշտպանութիւն պիտի ցանել:

Առւրիտ-արաբական բարենորոգչական այս երաժշգին
առաջին ընտութեամբը է յայտ կուգան երկու հիմնա-
կան բնորոշիչ գիծեր, որոնք սուրիտ-արաբական բարե-
նորոգչական պահանջներուն առանձնայատու կ բնոյթը
կը յատիկանշեն, խորապէս առըբերելով, օրինակի աղա-
գաւ, ալդ մասին մեր՝ հայոցս ունեցած ըմբռնութերեն

Ա. — Սուրբացիներն ու արտօները կը պահանջեն սուրբական և արար վիլայէթներու իւրաքանչիւր իւրին համար յատակ ապակեգրուացեալ ու էժիմ մը (որոշումները § 3): Սուրբառաբարացիներուն տեսակետով ուղեմն սուրբական կամ արարական ամեն մէկ վիլայէթ պիտի կազմէ ուրախ վարչական միութիւն մը անհաղորդիր սահմանակից միւս ինքնափառ վիլայէթներուն և կապւած ուղղակի յարաբերութիւններով կեդրոնական կառավարութեան հետ:

¶. — Առարիա-արաբացիները կը բաւարկ կ անանան իրենց սեփական միջոցներով ի կատար ածելու համար իրենց ծրագրած բարենորդութերը, համաձայնութեամբ օսմ. կառավարութեան հետ Անոնք շեն յայտներ եւրոպական միջամտութեան կամ հոգանակութեան ո՛ւեց ցանկութիւնն իրենց Քօնկրէի որոշումները պարզապէս ի գիտութիւն պիտի հազարդին միայն կայսրութեան բարեկամութեան պարագաներն են (Տաղապահութեան, §. 10).

ինչպես յայտնի է մենք, հայերս, կը պահանջենք
ընդհակառակը, որ մեր վեց վիլայէթները (Կարին
վան, Բաղէջ, Տիգրանակերտ, Խարբերդ և Անդրամինա)
բացի հարաւային և արեւմտեան եզրային ո՛չ-հայաբնակ
մասերէն միացելով կազմին մի և կ նաև հանգ մէ¹
մէկ նահանգապետի պատասխանառութեան հնթակա
և, երկրորդ, մեր երկրին մէջ ներմուծւելիք բարենա-
բոգումներու գործ ադրութիւնն ու երաշ
խաւորութիւնը յանձնեի եւրոպական տէրու-
թեանց կամ անոնց կողմէ նշանակւած եւրոպական մէ-
տէրութեան (Հայկ. Ծրագիր § 1 և 23):

Ապակեդրսոնացումը կամ վարչական ինքնավարութիւնը ըմբռնելու և գործ ու գրելու այս երկու գլուխվիճ առարկեր ձեւերը սուրբհացիներուն են:

արաբներուն ու հայերուն մօտ, աւելորդ է ըսել թէ ունին իրենց խորունկ պատճառներն ու մեկնութիւնը և ամեններն չեն բղխիր, ինչպէս պիտի ենթագրէք ո՛ւ և միամիտ քննագատ, սուրիա-արաբացիներուն կողմէ համեստութեան և վատահութեան մեծագոյն զգացումներու գէպի օմ. կոռավարութիւնը:

Սուրիացիներն և արաբները կը ձգտին, իրենց պարագուխներէն մէկուն բացատրութեամբն իսկ իրական ամեն ամեն ալայն նահանգ ու յիշ ապահով ու ուն առաջ առաջ առաջ առաջ, որովհետեւ չեն կազմեր իրենք, ինչպէս զոր օրինակ հայերը, ալպանացիները կամ մակեդոնացիները, ո՛չ միաձոյլ ազգ մը իր բնորոշիչ յատկանիշներով, ոչ այ ունին սեփական հող, *territoire*.— Եկայ ո՛չ սուրիա-արաբական ազգ, ոչ սուրիա-արաբական երկիր,— այս բառերու ամենածշգրիտ հասկացողութեամբ: Սուրիա-արաբական ժողովուրդները կրօնա-դաւանական տարբերութիւններով տարորուող հասարակութիւններ են միայն և որոնք ցեղագրական տեսակետով կը ներկայացնեն ամենէն յուսահատական լարիւրինթոսը *): Իսկ հողային, *territorial* տեսակետով Այս կամաց աշխարհագրա-պատմական ոչ-մէկ ամբողջութիւն, որ հնարաւոր և օգտակար գարձնէր անոնց միացումը:

Գալով երկրորդ կէտին, որ կը վերաբերի բարենորոգումներու գործ ադրբութեան եղանակին, սուրիացիներն ու արաբները չեն պահանջներ երրոպական երաշխաւորութիւն կամ վերահսկողութիւն անո՞ր համար, որ չունին ո՛ւսէ *juridique* հիմք այդպիսի պահանջ ձևաւորելու: Մենք ցոյց աւինք արդէն թէ ինչպէս նոր ծագում առած խնդիր մըն է այս սուրիա-արաբական հարցը, զուրկ տակաւին ամեն իրաւական նւիրագործումէ: Տարբեր շարժելով պիտի գործած ըլլային, սուրիացիներն ու արաբները, բաղաբագիտական բաւական մեծ սիալ մը, իրենց դատի ներկայ փուլին մէջ, Այստեղ

*). Սուրիացի բարենորոգչական պետքէն Խայրալլահ իր *La Syrie, la vie sociale, littéraire et politique* գրքին մէջ, հասարակաւծ 1912-ին, կատայ Սուրիայ երեք պիտի էթներուն, ուլորութ, դամակաս և Հալէպ, ինչպէս և երուսաղեմի անկախ միւթեւարիֆութեան ու Լիբանանի ինքնավար շրջանին ազգաբնակութեան մէկ պատկերը, հիմնելով զանազան հասարակութեանց կողմէ հաղորդաւծ թիւերու վրայ: Ըստ այդ պատկերին, որուն քննութիւնը խիստ հրահանգիչ է, միայն սուրիական յիշեալ երեք վիլայէթներու, մէկ միւթեւարիֆութեան և Լիբանանի շրջանին մէջ կապրին բար առ է աւելի հասարակութիւններ, ընդումնը 3,012,000 հոգի, որոնց 1,593,000-ը իսլամ՝ թիւերը, արաբ, միթուլի, չէրբէզ, բէրդ, թիւըմն, պարսկի, 922,000-ը քրիստոնեայ՝ մարօնիթ, յօն-մէլքիթ, սուրիացի-կաթոլիկ, քաղթէացի, հայ-կաթոլիկ, լատին, յօն-օթօթօքօք, յակովըրեան, նեստորեան, հայ-լուսաւորչական և այլն, 497,000 ո՛չ քրիստոնեայ, ո՛չ-իսլամ՝ հրէայ, եկզիդի, տիւրզի և այլն:

անոնք չէին կրնար, անշուշա, ներշնչակի հայերէն, որոնք շատոնց, զեռ 1878-էն և 1895-էն ի վեր, ի ձեռին ունին օմ. կառավարութեան համաձայնութիւնը հայկական բարենորոգութեան գործին մէջ եւրոպական պետութեանց երաշխաւորութեան մասին հայերը, այս պարագային, ձեռք բերւած իրաւունքի *droit acquisitif*, հիման վրայ կանգնած են և իրենց դիրքը բնաւ չէ կարելի բազդատել սուրիա-արաբացիներուն գիրքին հետ:

Այսպէս սուրիացիներու և արաբներու քաղաքական օրագրին երկու ամենաէական և հիմնական առաջար դրութիւնները, որոնց նկարագիրը պարզեցինք, ունին իրենց գերազանցապէս առարկայական պատճառները, միանդամ ընդմիշտ զերծ համեստութեան և այլ ենթական մասհագութիւններէ և անոր համար ալ, կարելի է ըսել, են ամենէն խելացին ու նպատակայարմարը:

Քոնկրէտ միւս որոշումները չեն ներկայացներ մասնաւոր վերլուծութեան որժանի բովանդակութիւն մը քոնկրէն հետեւղական իր ապակեղրուացման ըմբռնումին, զինքը իրաւասու չէ զգացած իրաբեսիր վիլայէթի ապագայ վարչական կազմուկերպութեան մանրամասնութիւններովը զբաղելու: Այդ աշխատանքը պիտի կատարէ անշուշտ իրաբանչիր վիլայէթի համար տեղական բարենորոգչական կօմիտէն: Բայց արւածը ըլլալով այն համակրութիւնը, որով Քոնկրէն ընդունեց Պեյրութի վիլայէթին բարենորոգմանց երագիրը (որոշումներ § 4), ներելի է հետեւցնել որ սուրիայան և արաբական բոլոր վիլայէթներու ապագայ ապակեղրուացեալ վարչութեան գլխաւոր գիծերը պիտի փոխ առնեին նոյն Պեյրութի երագրէն և այս վերջնոյն ուն սումնասիրութեամբը գաղափար մը կազմել սուրիա-արաբական բոլոր վիլայէթներու ապագայ կազմակերպութեան մասին:

Պեյրութի վիլայէթի մէջ գործադրելի *Դարենորոգմանց Ծրագիրը* ընդունեած նոյն վիլայէթի 86 ներկայացուցիչներու Ընդհանուր Ժողովին 31 յունար 1913-ի նիստին մէջ, շատ ընդարձակ և, ըսենք նոյնիսկ, ամբողջական տօքիւման մը չէ: Յայտնի է, որ անպատճառական է շտապով պետական հարւածի մը վագրգանին, անստուգութեան օրերու մէջ: Այդ պատճառով այ ներողամիտ ոգուվ վերաբերելով գէպի այդ Ծրագիրը քննադատական հայեացըով շպիտի մատենանք անոր:

Պեյրութի վիլայէթին *Դարենորոգմանց Ծրագիրը* իր ճակատին կը կը և կ մ ն ա կ ա ն 8 ր ա մ գ ո ւ թ ի ւ ն վերտառութեամբ հետեւալ աղբարաբութիւնը: — Ո ս մ ա ն ե ա ն կ ա ռ ա վ ա ր ո ւ թ ի ւ ն մ ը ն է ս, որմէ յետոյ ասաներեք յօդւածներու մէջ քննւած են և սահմանաւ նահանգին վարչական զանազան օրգանները իրենց իրաւասութիւն-

ներուն, պարտաւորութիւններուն և փոխ-յարաբերութիւններուն մէջ:

Այդ վարչական օրգաններն են. — 1) նահանգային լընդհանուր Խորհրդականը օրինական նահանգին և Ընդհանուր Խորհրդականը (Conseil Général), 2) նահանգային գումարել (Gouverneur Général, վարչի), 3) նահանգային յանձնաժողովը (Commission départementale), 4) Օտար խօսր հրդականներն ու քննիչները (Conseillers et Inspecteurs étrangers):

Այս չորս կարգի հասաւառութիւններուն մէջ կարելութոյնն է նահանգային Ընդհանուր Խորհրդականը, որուն վրայ կը հանդի ու էրութիւնի բարենորոգչականներու ապակեդրոնացման ամբողջ սիստեմը: Նահանգային Ընդհանուր Խորհրդականը բաղկացած երեսուն անդամներէ (15-ը իսլամ, 15-ը ո՛չ-իսլամ, ամենքն ալ ընտրովի) (Յօդ. 3) կը վայելէ ամենալայն իրաւասութիւնները: Նահանգային ընդհանուր Խորհրդականը է նահանգին գերագոյն մարմինը, իրմէ կը բղնին բոլոր գլխաւոր function-ները — հանր. շինութիւն, հանր. կրթութիւն, դատաստանական կազմակերպութիւն և այլն, և բացի այդ ունի օրէնսդիր իշխանութիւն (Յօդ. 1 և 3) ու մինչեւ անդամ Խորհրդարանական իրաւունք, բանի որ նահանգապետը, վալին, որ պետն է նահանգին գործադիր իշխանութեան, պատասխանատու է անոր առջև: Նահանգային Ընդհ. Խորհրդականը կը նայ մէջ մեծամասնութեամբ հրաժարեցնել վալին (Յօդ. 6):

Նահանգապետը, վալի, կը նշանակի կեդրունական կառավարութեան կողմէ (Յօդ. 6) և ունի վարչական պարտաւորութիւններ երկու ուղղութեամբ — նախ՝ իրրե գործակատարն ու պատուիրակը կեդրունական իշխանութեան և, երկրորդ՝ իրրե ներկայացուցիչը նահանգին (Յօդ. 2): Այլ վայելէ Խորհրդարանական կառավարութեան մէջ գործադիր իշխանութեան վայելած բոլոր իրաւասութիւնները ինչ ինչ երկրորդական նշանակութիւն ունեցող տարրերութիւններով: Նահանգապետը հաւանութեամբը կեդրունական կառավարութեան կը նշանակէ միւթեարիֆները, գայլագամներն ու միւտիրները (գաւառներու, գաւառակներու և գիւղաբնումբերու կառավարիչները) և Քննիչ Մասնախումբի մը պատրաստած ցանկին վրայէն կ'ընտրէ զանազան պաշտօնեանները, կը գումարէ նահանգային Ընդհանուր Խորհրդականը սովորական կամ բացառիկ նախաչընդունի, վերջին պարտագային նահանգային Յանձնաժողովին կամ Խորհրդականներու Մարմինին համաձայնութեամբը և այլն:

Նահանգային Յանձնաժողովը կը բաղկանայ ա) վեց անդամներէ ընտրւած նահանգային Ընդհ. Խորհրդին կողմէ, իր մէջէն, գաղտնի բւեարկութեամբ իրաքանչիւր նախաշըննի վերջանալուն. բ) Երկու անդամներէ ընտրւած նահանգին կեդրունին Խորհրդականներուն մէջէն. գ) Մէկ անդամէ մը՝ առնած իրաքանչիւր

գաւառային շրջանէ (district), նահանգային ընդհ. Խորհրդին կցւած օտար խորհրդականը օրինական նախագահին է Յանձնաժողովին, որ կը կառարէ անսունի մը հակակընի պաշտօն գործադիր իշխանութեան վրայ, — կը հսկէ նահանգային Ընդհ. Խորհրդին որոշումներու գործադրութեան, կը պատրաստէ ծրագիրները ընդհանուր Խորհրդին բնութեամբ ենթարկելու համար և այլն: Նահանգային Յանձնաժողովը կրնայ նաև 2/3-ի մեծամասնութեամբ և իր նախագահին համաձայնութեամբը բացառիկ նախաշըննի հրաւիրել նահանգային ընդհանուր Խորհրդը (Յօդ. 5):

Երկու կարգի օտար խորհրդականներ և ընդհանուր պիտի կոչւին պաշտօնի, բոլորն ալ արարերէնի, թիւրքի թիւրքէնի կամ ֆրանսէրէնի կառարելապէս հմուտ ըլլալու պայմանով: Օսմանեան կեդրունական կառավարութիւնը պիտի նշանակէ նահանգին կեդրունական բաղարին մէջ պաշտօնավորելու նպատակով, օտար խորհրդականներ կցւած ուստիկան-զօրաց, թղթատար-հեռագրական և մաքսային-ելեկտրական սպասարկութիւններուն, ինչպէս նաև օտար քննիչ մը՝ կցւած իրաքանչիւր գաւառային շրջանի վարչութեան այս վերջնոյն գործունէութեան բոլոր ճիւղերուն վրայ հակակըն (contrôle) կառարելու պաշտօնով:

Նահանգային Ընդհ. Խորհրդը պիտի նշանակէ իր կողմէ օտար Խորհրդականներ կցւած հետեւու սպասարկութեանց. — 1. Նահանգային Ընդհ. Խորհրդը, 2. Պատուստանական, 3. Հանր. Ընդհանութիւնը, 4. Հանր. կրթութիւնը, 5. Բաղդապետութիւններ և 6. Աստիկանութիւնը: Բոլոր օտար Խորհրդականները պաշտօնի պիտի կոչւին 15 տարւան տևողութեան մը համար (Յօդ. 7): Նահանգին կեդրունին մէջ պաշտօնավարօղ օտար խորհրդականները և նահանգ. Ընդհ. Խորհրդին նախագահը (կամ, ի բացակայութեան, նահանգային յանձնաժողովին մէկ անդամը նշանակւած անոր կողմէ) կը կազմեն միասին Խորհրդականներու Մարմինը (Corps des Conseillers), որուն օրինական նախագահին է նահանգապետը կամ ի բացակայութեան, նահանգ. Ընդհ. Խորհրդին նախագահը կամ այս Խորհրդին օտար Խորհրդականներու Մարմինը ունի գըլխաւորաբար միկնաբանական պաշտօն մը թէ նահանգային Ընդհ. Խորհրդին կողմէ բւեարկւած անդամներուն և թէ՝ կեդրունական կառավարութեան կողմէ հրատարակւած բայց ու էրութիւն նահանգին վերաբերեալ օրէնքներուն նկատմամբ (Յօդ. 13):

Ինչ կը վերաբերի պիտածէին, բացի մաքսային, թըլթատար-հեռագրական և զինորական առողբի հասոյթեներէն, որոնք պիտի երթան պետութեան կեդրունական գանձին, միւս բոլոր հասոյթեարը պիտի կազմեն նահանգին սեփական եկամուտները և անոնց յանձնանձումը պիտի կատարէ նահանգային Ընդհ. Խորհրդը լիովանար պատութեամբ (Յօդ. 9):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

XIII

ԶՐԴԱԿԱՆ ՊԱՑՈՒՀԱՍԸ

Պետքին՝ մէջ պետութան։—Երկու խառագան։—Քրդական դրացիութեան աղյօսուու հանգումներ։—Պատմաններ՝ մանուկան, խաղաղական եւ կրօնական։—Երկու տարբե կիցնացան։—Նուսակեացի և նօսակի նախագրական բաղկումը։—Պարագանելիքի գրում գլուխին բարյուկանի վրա։—Քրեզութեան վնասնուու պատմեր։—Ցիւցան նախական։—Եր՝ առանց ունեցած պայացին զիսակցութան։—Հայուական զարարագութիւններ։—Քենօնօնի և Օսրաքօնի մահանակիւում։—Հայ մէղադիմի կարծիք Երի արհութեան մասին։—Բաժմէին վկարութիւններ։—Քրեզ Երկարուց զառակարգ։—Աշերէներ։—«Մարզականի ներազնին տեսակը։—Թէմինի պատասխանուութիւններ։—Թիւրմական նախականութիւնը Երկու հանդիպ։—Գրէթէրին նախական։—Շեղին առաջին նույնութեան մէջ։—Հայ Երական յարարելու րին։—Հայ Երական յարարելու րիններ։—Խափիրութիւն։

«Հոն բռնաւորաց խումբ մը կայ—Քիւրդն է անի, որ մեզի պէս հպատակ չէ Տէրութեան, որ տուրք չը տար, այլ թշուառ հայը կը կեղեքէ և կ'առաջատակէ զէն 'ի ձեռին»...

Այսպէս եր բնորոշում այդ սոսկալի պատուհանը Ազգային ժողովի երեսփոխաններից մինը 1870 թ. նոյեմբեր 21-ի նիստի մէջ, Խրիմեան պատրիարքի նուխագահութեան տակ։

«Քոնաւորաց այդ խումբը՝ իր բառմելի պատկերով այնքան ծանօթ ու ընտանի է... մանաւանդ հայ յեղափոխականին։ Այնքան ճնշող ու եղերական է նրա խաղացած դերը հայ աղաստագրական շարժման հանդեպ... Ով չգիտէ, որ վերջին քառորդ դարու ընթացքում հայ ֆեդային, գաղափարական քարոզիւը իր ծանր, տաժանելի առաջնադաշտութեան մէջ զարնելէ ամեն բալտիկան գրդական այդ ահեղ ու անխուսափելի պատուհանին...»

«Զինուածն է, տուրք չը տար և հայը կը կեղեքէ ու կ'առաջատակէ»...

Որբան ժամանակ է տեսէ այդ գժոխային վիճակը։ Ամրողջ գարերու։

Հայոց հարցը հայ-բրդական յարաբերութիւնների հարց էր, իր իրաւական ծագման մէջ իրաւակէս, de jure այդ հարցը հրապարակ գրւեց 70-ական թւերին միայն, բայց իրապէս, de facto նա գոյութիւն է ունեցել գարերից ի վեր։

Աչ մի այլ տարր պատմական Հայաստանի սահմաններում այն աստիճան չի վնասել հայութեան Փիղիկական և կուլտուրական գորութեանը, ինչպէս բիւրդը։ Աչ մի ուրիշ ժողովրդից—թիւրք, թաթար, պարսիկ ելնու իսկ գոյցէ սանձարձակ բռնապետական կառավարութիւններից, հայը չի կը այնքան հարւած ու տառապանք, այնքան խորունկ և աւերիչ հարստահարու-

թիւն ու կեղեցում, ինչպէս բրդից, իր դարաւոր, արհաւարձի գոյութեան մէջ հայ ժողովուրդը, թիւրբահայը դուցէ յաճախ չի ել նշմարել օսմանեան կառավարութեան ներկայութիւնը—մի կառավարութեան՝ որ յաճախ անզօր է եղել իր հեռաւոր կենտրոնից իշխելու լայնատարած կայսրութեան այլապաղաղ ծայրերի վրայ յարգել տալու ամենուրեք իր կամքն ու օրէնքը—բայց հայը ամեն վայրկեան զգացել է ներկայութիւնը մի ուրիշ կառավարութեան, քը դական Դէրէրէ բէյի, որ ոչի եղել հպատակ, չի վճարել տուրքեր, այլ յարաժամ կեղեքել է, ասպատակել իր ճորտերին, իր ֆլային⁴... Հայը ամեն օր և ամեն վայրկեան զգացել է ծանրութիւնը այդ երկրորդ լծի, այդ վայրագ, անօրինակ ֆէօդալիզմի, որ ոչ միայն դարեր շարունակ կեղեքել է նրա աշխատանքը և աւերել անտեսութիւնը իր քմահած տուրքերով ու աւազակային անդադրում արշաւներով, այլ և, իբրև Հայաստանի գլխաւոր տէր, տանջել է, մորթել, բռնաբարել ովլային⁵, նրա բոլոր սրբութիւնները անպատճի ոտնահարել

պետութիւն—մէջ պետութեան Մի կրկնակի և ահապելի լուծ, որի դաժան պատերի նմանութիւնը հազիւթէ գտնւի երկրագնդի որևէ այլ անկիւնում, մարդկային պատմութեան որևէ այլ էջի վրայ:

Դժւար է, արգարե, համեմատել երկու լուծը — թիւրբականն ու բրդականը — դժւար է ասել, թէ որն է եղել աւելի կամ նւազ ձնշող ու հարստահարիչ հայութեան համար: Երկուսը իրար լրացրել են, երկուսն էլ ասես մի նզովելի ճակատագրականութեամբ, կոչւած են եղել իրարու թէ ու թիկունք ծառայելով ճարտկել տատիճանաբար փոքրաթիւ հայ ժողովուրդը, որ այնքան դարերից ի վեր ձգւոծ է, իբրև միակ քրիստոնեայ ովագիս, մահմեդական ամենակուլ ովկիանի մէջ:

Ինչո՞վ է արդեօք այդ բրդական դրացութիւնը այն աստիճան աղետաւոր ու աւերիչ եղել հայութեան համար, ո՞րն է այն հիմնական պատճառը, որ այնքան խոր, անվերածելի անտագոնիզմ է սահղել երկու արիական ժողովուրդների՝ բրդի ու հայի միջև:

Մեր նախընթաց եղերի մէջ արդէն իսկ շօշափեցինք այդ ծանր կնճիւը: Պատճառները շատ են, կայ բաղաքական դրդիչը, որ օսմանեան վարիչների ձեռքում ձգտել է միշտ ստրկական հնազանգութեան մէջ պահել քրիստոնեայ ու այսաւին, կայ կը օնը, որ նոյնպէս, անտարակոյս, իր գերն է ունեցել, ինչպէս արդէն բանից շեշտած ենք, սակայն, իսկ ամ կան զգացումն ու համարական գործուրդը չեն եղել է մի ահաւոր խորագութեան օւարագակարդ տարրի ձեռքում... Կայ մի այլ հիմնական, առաջնակարգ պատճառ, որ պահել է երկու դրացի ցեղերը մշտնջնաւոր հակամարտութեան մէջ, — դա տնտեսութեան (économie), մշտկութեան,

կամ, ասենք աւելի պարզ խօսքով, որ ուր ապահով առ առ բերութիւնն է երկու պատմական դրացիների մէջ:

Անյիշատակ ժամանակներից ի վեր բիւրդը միշտ մնում էր եապէս հովուական, խաշնարած ժամայնքները — նօմադ, թափառական Առաջինները անարար են, յամառ, չարքաշ աշխատաւոր, ընդհանրապէս հարստացող ու բարգաւաճող և ուրեմն կուլտուրայի, բաղաբեկիթութեան ամբարող Ակրինները զուրկ են այդ շինարար, արդիւնաբերող ու քաղաքակրթող ճիգերից և ձիբըներից: Ցաւարած ու վագարօն նրանք չուում են արօտից-արօտ, անկելով իրենց շարժական վրանը այսօր այս նույն ազգի մօտ, վաղը այս ինչ ուրիշից ոչ մի տեղ չեն կանգ առնում, ոչ մի հարուստ, խոտուեա դաշտավայր, ոչ մի զով ու հրապուրիչ գետեզերը չի շղթայում այդ անհանգիստ, կապրիզոտ, յաւերժօրէն առաջ սլացող նօմադների ու շագրութիւնը..

Այդպէս է եղել բիւրդը երկար դարեր շարունակ: Հերկել ու ակոսել, արիւն-բրտինք թափել դժւարին ու արդիւնաբար աշխատանքի մէջ, սովորել արհեստ, վաճառականութիւն, սովորել մանաւանդ գիր, դպրութիւն, տուն գնել, հարստանալ, ստեղծել, մի խօսքով, կուլտուրական արժեքներ ու բարիքներ, այդ բոլորը դուրս է մնում նախրապան և վագարօն ժողովրդի մտահոգութիւնից:

Այսօր, անշուշա, մի յայտնի փոփոխութիւն կատարած է այդ վայրենի, նախսապատմական կենցազի մէջ: Կասակեաց և հողագործ տարրը աճում է հետզհետէ: անշուշա, բիւրդ հողագործներ եղել են և ննում, անդամ հերօօտին ու Սարաբօնի ժամանակներում, սոկայն, երկրագործութիւնը դիտւել է միշտ իբր երկրորդական, արհամարհւած մի զբաղմունք: դա նստակեաց գոյութիւն չէր, այլ կի սա թափառ ական: տարւայ դժւառ եղանակներին բիւրդը մնում էր մի որոշ տեղ, հողը հերկում, իսկ ամառը իր հօտերով բաշխում երգեպի լեռը, ձուլում իր արիւնակից, իսկական նօմադների հետ և պարագում խաշնարածութեամբ Այսօր եւ դա տարածւած մի երեսոյթ է Դարերը, այս, մինչև մի յայտնի աստիճան փոխել են բրդերի վիճակը, բայց և այնպէս, այսօր տակտին բազա բների մէջ անեն երի մէջ հազւագիւտ է բիւրդ ազգաբնակութիւնը: բազա բներից՝ ասես ընազդորէն գարշում ու փախչում է բիւրդը... որովհետեւ քաղաքն է կուլտուրայի որորանը, այնաել է, որ զարգանում է տուետուր, արհեստ ու արդիւնաբարծութիւն, այնեղ է, որ յղիւում են կամաց-կամաց վայրենութեան ու բար-

բարոսութեան բնազդները և ուղղում գեպի աւելի
մարդակայել բարբ ու կենցաղ:

ու արտպմունքը գնում է իր դրոշմը՝ և ցեղային բնաւորութեան ու բարբի վրայի խաչնարածութիւնը, վագարօն, թափառական կենաքը զարգացնում է արկածասէր ու աւազակային հակումներ, որոնք սերունդէ սերունդ մարզւելով ու զօրանալով, ստեղծում են ցեղի մէջ մի բլորովին առանձնայատուկ և չարաշուք նկարագիր... Ահա թէ ինչու նօմադների դրացութիւնը եղել է միշտ խաղաղ, նստակեաց և երկրագործ համայնքների համար — անէծք ու պատուհաս Այդ դրութիւնը չի թոյլ տւել, որ խաղաղ համայնքը զարգանայ, առաջագիմի, հանգիստ սրտով նւիրւի կուլառւրական պրօգրէսին:

Հովուական շրջանը բռնում է մարդկային եւօլիւսիօնի ստորագոյն աստիճաններից մինը — և այդ շրջանում ապրող ժաղավուրդները մատնում են սովորաբար վերսիշեալ գծերը աւազակային ու աւարատենչ բնազդների հետ՝ նրանք ցոյց են աւլիս առ հասարակ մի դաժան անդժութիւն գեպի իրենց նմանները, գեպի բոլոր նրանք, որոնց հանդիպում են իրենց անդուլ թափառութեարի ու արշաւների մեծ ճանապարհին Հասարակական գիտութիւնը բացատրում է, թէ ինչու տընտեսական և ընկերային եւօլիւսիօնի այդ հեռաւոր շրջանի մէջ՝ ցեղերը, աւելի ճիշտ, հօրդաները այնքան քիչ յարգանք ունին դեպի մարդը, նրա ստացւածքը նրա պատիւը, թէ ինչու նրանք այնքան դիւրութեամբ կուռորում են իրենց նմաններին Բարոյական հասկացողութիւնները և նրանց մէջ ամենամեծը, կենտրոնականը — յարգանքը դէպի մարդկան անձնաւորութիւնը, որ լաւագոյն չափանիշն է քաղաքակրթական առաջադիմութեանը — բարոյական հասկացողութիւնները մի ցեղի մէջ ունին սերտ կապակցութիւն անտեսական գործանների, մարդկանց արտագրական, ստեղծագործ կարողութիւնների հետ — նոյն այդ ցեղի սահմաններում։ Քանի գեռ ցեղը մնում է հին, նահապետական կացութեան մէջ, իր աշխատանքի խոպան, ողորմելի գործիքներով, արտագրելու, ստեղծագործելու իր չնչին կարողութեամբ, — նրա հաւաքական գիտակցութեան մէջ, նրա իւրաքանչիւր անդամի գիտակցութեան մէջ գժւար կը ծագէ՛ թէ սեփական արժանապատւութեան ու իրաւունքի զգացումը և թէ ուրիշի իրաւունքները յարգելու գաղափարը թէ վայրենի թէ նրանից մէկ աստիճանաբար բարձր կանգնածք արբար ու սի աչքում՝ մարդը ոչինչ է, մի սոսկ իր է, մի անարդ գրաստ... Եւ իրօք այդպէս էր այն հեռաւոր ու խաւար ժամանակների մարդեակը, միջին մարդը՝ մի ողորմելի երկուտանի, որ խաղալիի է բնութեան ձեռքում, մատնւած նրա ամենազօր տարբերքներին և անզօր հակազդելու աւելիչ ուժերի գեմ, ան-

զօր ստեղծագործելու կուլտուրա կան արժեքաները մարմանավիճելու ուրեմն, որ այդ վայրենի ու բարբորոս աշխարհների մէջ թագաւորում է այնքան պազու գատան անգածութիւն դէպի մարդկային կենցը և որ այնտեղ մարդը զարնում, ոչնչացնում է իր նմաններին, որպէս անբան գրասաների:

Քիւրդութիւնը մի գժբախտ մեացորդ է այն հինաւուրց աշխարհի, մի հարազատ բեկոր է այն նախնական մարդկութեան:

Ո՞չ մի հետք չկայ նրա մէջ ազգային կամ ցեղային գիտակցութեան, չկայ նոյնիսկ մեր օրերում քիւրդցեղային միութիւն, ամբողջութիւն, այլ այդ տասնեակ և հարիւրաւոր ցեղերը կամ տոհմերը (*tribus, Stamm*) — Ըիկակցի, Հասնանցի, Ֆէլալցի, Հայդարանցի, Ռէշքոտանցի, Կրապցի, Պալաբցի, Մօտկանցի, Խարզանցի, Բադրանցի ևն — ապրում են իրր տարրեր, յաճախ իրար թըլշնամի համայնքներ, ուր տակաւին իշխում է հինուուրց Ա. Ե. Գ. Ե. տ. տ. ա. ն., արինի վրէժինդրութիւնը, ապրում են նահապետական սկզբունքով, իրենց շեյխի, նահապետի միահեծան իշխանութեան տակ, կոյր ու հլու հնազանդութեամբ.. Ըեյխը ցեղի ազնւագոյն տոհմից է և աիրում է ժառանգաբար, սերնդէ-սերունդ, լուծում է ցեղի մէջ ծագած վէճերը, առաջնորդում է իր մարդկային նախիրը դէպի կոիւ, աւազակային արշաւներ... Ո՞չ մի հետք ընդհանուր քրդական համերաշխառ թեան, այլ միայն անծայր, անկերպարան, բարբարոսային միքառու:

Քիւրդութիւնը՝ մէկ հայկական լեռնադաշտում և
մէկ իր բնիկ հայրենիքի մէջ, Քիւրդիստանում՝ պահ-
պանելով հանդերձ նախնի հովուական ժամանակների
մի բանի գրական գծերը, պահպանում է և այդ ըրջան-
ների առաքենութիւն համարւած բացասական, աշխար-
հասաստն բնազդները, ամենից առաջ՝ աւազ՝ աւազ կու-
թեան բնազդ դը՝ Գրեթէ բոլոր առւրիստներն ու
գիտական հետազօտողները միաբերան վկայում են, որ
քրդական բնաւորութեան մէջ պահպանւած են միջնա-
դարեան ասպեկտական գծերը, որ քիւրդը վեհանձն է
ազնիւ, հիւրընկալ և պատւասէր Էլիզէ Ռեկլիւ ասում
է, որ քիւրդը իր բոլոր արածներով հանդերձ աւելի
ազնիւ է, բնաւորութեամբ աւելի շիտակ, անխարդախ,
քան իր բոլոր գրացիները բաֆֆին որ այնքան ասում
էր քիւրդ տարրը, իրբ հայութեան անդիտակից ու
մահացու թշնամի, բաֆֆին ևս խոստովանում է, որ

“Քիւրդը... շատ հանգամանքներում հպարտ է և աղինի... նա իրան չէ ստորացնում, պատերազմելով իրանից թշուարածների հետ... Քիւրդը խարեւայ չէ, նա հաւատարիմ է իր խոսուումը կատարելու մէջ”, և այլն:

Զպետք է, սակայն, չափազանցնել ըրդական առաքի-
նութիւնները, մանաւանդ հիւրասիրութեան ու ասպե-
տական վեհանձնութեան զգացումները, որոնք, ինչպէս

բաղոր. Նախնական, արիւնի վրէժինդրութեամբ ապրող
ցեղերի մէջ, չեն կըում երթէք լայն, մարդկային աշ-
բուխտական գրոշմ, Նոյն Բաֆֆին, որ այնքան երկար
ու մօտիկից ուսումնասիրել էր բրդերին, ասում է մի
այլ աեր.

Քուրդը իր շաղըի մէջ հիւրասէք է, որպէս Աքրահամ, բայց նա չի խնայի կողոպատկու նայն հիւրին, եթէ Նրան հանդիպէ մէկ մզոն հեռու իր շաղըից *).

Քրդերը թափանից բացին ու հիւրասէք—առօգմ է ամերիկացի յայտնի ճանապարհորդ Գրին — և նման շատ որիշ ասիսական ցեղերին, նրանք պահպանում են պատմի որոշ զգացում, թէև ըիրա ու դաժան բայց այն ժամանակից, եթիւրբերը խորսութել են նրանց իշխանութիւնը, աւերել նրանց զղեսչները, արսորել նրանց չեղյուրին, այն ժամանակից ի վեր մեծ մասամբ անհետացել են այդ նորը յառափթիւնները, որդ ասպետական զգացումները: Համ վայրերում նրանք այլառեւել և զարձել են վայրենի և անօրէն աւազակների մի հօրդա, զոտող, նենդ և անգութ: Երեսց վաղեմի զիբուրի ու իշխանութեան աւանդութիւնները սույցանում են նրանց մէջ առելութիւն գէպի թիւրբը, որ պատճառ է նրանց անկումի և նախանձ ու արշամարհանը գէպի քրիստոնեան, որ եղել է զարերից ի վեր նրանց ճորտը և որի առաջադիմութիւնն ու բարեկեցութիւնը քիւրց հանդուրժել չի կարող ^{**}):

Աւազակային ու թարանչի բարբերը նոր չեն, սա-
կայն, բրդերի մէջ. Նրանք նոյնը ան հին են, որքան ցեղը
Աւազակային և աւարտենչ բնազդը կատարում էր իր
խօզական թռիչքները գեռ քրիստոսից դարեր առաջ,
նրա մասին տեսնում ենք վկայութիւններ յունական
պատմագիրների մօտ Ա ա ր ա բ օ ն մի բանի անդամ
յիշատակում է բրդերին և անւանում է աւազակ ցեղը
Ք ս ե ն օ ֆ օ ն ***), Հռչակաւոր Դ Տ ա ս Հ ա զ ա ր ի Կ ա հ ա ն ջ ի հ ա
մասին իր գրած պատմութեան մէջ երկարօրէն խօսում է
ովատերազմասէր, բազ ու բարբարոս կարդիակներին
(բրդերի) մասին, որոնք եօթն օրւաւ ընթացում աւելի
առնջանք ու կորուսա պատճառ եցին յոյներին, բան
Կ ի ւ ր ո ս ի Հ ս կ ա յ բ ա ն ա կ ը Մ ի շ ա գ ե տ ը ի պ ա տ ե ր ա զ մ ե ր ո ւ ժ
Ք ա ն ի բ ա ն ի ա ն լ ա մ ի բ ե ն ց շ ե շ ա տ կ ի ն ե տ ե ր ո վ ա յ լ ո ւ ժ
ո ւ բ ա ր բ ա ր ո ս ն ե ր ը ն ե ց ն ե ն ց չ ե տ ե ր ո վ ա յ լ ո ւ ժ

Գանօնօթում հազարդում է նաև, որ իր ժամանակում
Կենարիլէս (⁶) գետի ամբողջ երկարութեամբ, որ բա-
ժանում էր բրդերի երկիրը Հայաստանի ստորապու-
թիւնից, Հայկական եղերքը՝ սահմանից մեկ օրւան ըայլ-
ւածքի արածութեան վրայ՝ մնում էր անբնակ, անա-
պատ Աղ մի գիւղ չէր համարձակուում հաստատել այդ
շրջանի մեջ, ուր անդադրում արշաւներ եին գործում
քիւրդ ասպատակող խմբերը:

Եռաշաբակ բրդերը մի բազմ ժաղկուրդներ, որ մասն են անկախ թագավորություն (պարսկաց): Մի անգամ վերջինը դրէ

^{*)} Բարեկամություն, Տաճարականություն. — Քրիստոնություն

*Fred. Davis Greene, The Armenian Crisis
and the Rule of the Turk.* £2 4s.

*** Քանեազօն, յոյն պատմագիրը և միանգամայն զօրս-վարը, ծնւել է յօտաւորապէս 430 թ. և մեռել 352 թ. Ա. Ա. Խնչպէս յայտնի է, առ ուղեկցել է Տառ հազարի ի աշխանջին, Պարսկաստանից գեղպէի իր հայրենիքը Քիւրդիստանի և Հայաստանի վրայով:

էր քրդերի երկիրը 12 մերիադ զօրը, և ոչ մի զինւոր չէր վերագարձել, երկրի գծւարութիւնների պատճառով *).

„Քաջ ժողովրդից մասին մեր քեդարիները տալիս են յաճախ ոչ շատ նպաստաւոր վկայութիւններ։ Յաճախ ենք լսել Նրանցից, որ քիւրդը բաջ է միմիայն անդէն և անարի մարդու հանդեպ, բայց որ նո վեհերքու է և դիւրութեամբ նահանջող, երբ առջևը տեսնում է խռական կուռզներ։

Հայ Փեդային յաճախ է — անգիտակցաբար կամ
նոյնիսկ գիտակցաբար, սարաւեժիկ նկատութերով, ժո-
ղովուրդը բաջալերելու յատ հոգութեամբ — չափազանց
բել, գերզնահատել սեփական ոյժն ու արիութիւնը և
նսեմացրել հակառակորդին այնուամենայնիւ, վերոյի-
շեալ վկայութիւնների մէջ կայ, անշուշտ, ճշմարտու-
թեան բաժինը Հնարաւոր է, որ սակաւաթիւ Փեդայի-
ներ, զինած միանգամայն հրացանով ու գաղափա-
րով, հզօր իրենց կոչման գիտակցութեամբ, աջողեն
յաղթահարել և փախուստի մատնել իրենցից անհա-
մեատ աւելի բազմաթիւ բրդական վայրենի, անգաղա-
փար խաժամութը... Այդպէս է եղել բանից արդէն՝ մեր
վերջին բառորդ դարու ազատագրական կոիւների մէջ

Խաշնարածութիւնից դուրս՝ աւազ կութիւնն
ու թալանը միակ պատւառը զբաղմունքներն են
քրդերի մէջ Եւ ոչինչ չկայ այդաեղ նւասացուցիչ
ցեղի ու անհատի համար. Թալանը, ուրիշի գոյբը բը-
նութեամբ յափշտակելը, անգամ գուեհիկ գողութիւնը
ոչ միայն չեն ստորացնում բիւրդ ասպետի արժանա-
պատւութիւնը, այլև համարում են ու արիստօկրատն
ազնւական ցեղին միակ վայել պարապմունք Նրկրագոր-
ծութիւնն է—նրա համար անպատիւ արհեստ. Այդ ուն
չարքաշ աշխատանքը նա թողնում է ու այսներին ու
թողնում է իր ճորտ ու ստրուկ, բիւրդ ու հայ գիւ-
ղացիւթեան **).

^{*)} Xénophon, *Expédition de Cyrus et Retraite des Dix Mille.*

**) Հետաքրքրուկան և մինչեւ օրս առեղծւածային մրցերն ուժութեաւ է այդ „Քիւրդ“ կոչուղ երկրագործ գիւղացիութիւնը, „Ա. Հ. Ա. Թ. Բ.“ Քիւրդ է նաև արդեպէ իր ցեղային հանգամանքով, իր ծագումով։ Ամանը, օրինակ Գրիլ Հուսաէ (Grillhuset), պնդում են, որ շետն Քիւրդի ական ատարքերութիւններ այսպէս կոչւած աշխերէնների (իշխող, հրամայուարքի) և հազարորդ զանգւածի միջն. որը շատ աւելի բազմաթիւ է, քան առաջինները։ Ատկայն, այն բոլոր գիւղանկան հետազոտողներն ու միսիօնարները, որոնք ապրել են երկաժամանակ ըստ երի աշխարհում, միարեցան հաստատում են որ թէ Պարսկաստանի և թէ Ասիական թիւրքիոյ բիւրժազոյուրդների մեծամասութեան մեջ կան երկու խիստարքեր դասակարգեր, որ ծագում են հուանականաբարտարքեր ցեղային արմատներից։ Այդ երկու կաստերն են քերմանի կամ աշխերէմ, որ ասել է ազնւական, և գուրակամ գիւղացի։ Պնդում են, որ այդ վերջինները մացորդ են երբեմն յաղթաւած և աշխերէթների ձեռքով ստրկացւած

Մէլիքազէն գրում էր „Մշակ”ին 1872 թւի իր սովորութեան միջոցին թիւրբ-պարսկական սահման-ներում.

Քրդերը Ներկայացնում են մարդկութեան առաջին ժամանակակիցներ, մարդասպանութիւնը ոչ միայն մեղք չէ համարվում նոյն մէջ, այլ և զերազափում է, որպէս ազնիւ բաջադրութիւն։ Մարդու արիւնով իր թուրք չը ներկած ողաճարդը և յափշտակութեան, կողապուտի անընդունակը համորդում է ծոյլ և երկշուռ մարդ։^{*)}

Քիւրդ ցեղը ոչ միայն աւել է և տալիս է աւազակ-ներ, այլ և արտադրել է աւազակի կլասսիկ տիպը, և դժւար թէ երկրագնդի որևէ այլ ցեղ կարողանայ, մրցել նրա հետ այդ ասպարեզում։ Համեմատել են նրան ալ-բանների, չէրքեզների, ամերիկեան հնդիկների հետ. ոչ մէկը սակայն չի կարող հասնել նրան՝ աւազակային արհեստի մէջ։

Իմ հինգամեայ ուղեորութիւնների ընթացքում Աֆրիկայի և Ասիայ մէջ—ասում է Մօրից Վագներ—ես շատ եմ տեսել աւազակարարոյ ժաղավորդների, բայց ոչ մէկի մօտ, ոչ իսկ թափթարների ու չէրքեզների, ոչ Բերբերուտանի Կարիւների մէջ աւազակարին հակումը (Raublust) այսքան խոր արժատներ չի ձգել, ինչպէս բրդի մէջ ^{**)}։

Եւ այդ ասրասափելի ու արկածալի արհեստը զարդացրել է այն անսօվզօր ճարպկութիւնը և այն դաժան, զագրային անգթութիւնը, որ սակաւին ժամանակակից քրդի յատկանին է և որոնցով նա վերջին երեսուն տարւայ ընթացքում սասանեցրեց հայ աշխարհը, ողջ Եւրոպան..

Գողանալու, փախչելու և թագնելու մի անօրինակ հըմ-տութիւն, սողալու, մագլցելու, դէպի լեռ բարձրանալու մի արտահարդ ճարպկութիւն—ասում է նոյն Վագներ։

Դուք տեսնում էք յանձին քրդի՝ մարդ-զազանի ամենա-նուրբ տեսակը, ճարպիկ, զգաստ, արթուն, իր թափանցող, ևւ, ածխառոյն աշքերափ, որոնք զատ են ու դաժան, ինչպէս վագրի աշքերը (... eyes as cool, cold and cruel as that of a tiger).—այդպէս է նկարագրում ամերիկացի Գրինը (The Armenian Crisis...)։

Անգութ ու բարասաիրտ՝ նաև ընտանեկան իր յարա-բերութիւնների մէջ։

ոՔիւրդը ցոյց է տալիս անհամեմատ աւելի քնքու-թիւն ու բարեացտկամութիւն գէպի իր ձիերը, քան-

մի ազգին էլիդիւ նոյնպէս յարում է այդ կարծի-քին (Récus, Asie Antérieure): Կրանք, այդ յաւիտե-նական յաղթաւածները, ճորտեր են, որ երբէք չեն կարող բարձրանալ մինչև պտաւերազմիկ ու ազնւակոն դասի շարքերը, այլ հարկադրած են միշտ հողը հերկել իրենց տէրերի համար, որոնք պահպանում են նրանց վրայ կեանքի ու մահւան իրաւունք։

Արէշի վկայութեամբ՝ Փիզիկական գծերը տարբեր են տի-րող և սորուկ դասակարգերի մէջ։ Ստրուկների գէմքերը աւելի մեղմ ու կանոնաւոր և ընդհանրապէս աւելի գեղե-ցիկ՝ մատենում են յանական տիպարին։

*) „Մշակ”, 1872 թ. № 29.

**) Wagner. Reise nach Parsien und dem Lande der Kurden.

գէպի իր կինը՝ — ասում է Զէրմա նրեյդ, որ երկու հասորներ է գըել քրդերի ու հայերի մասին *։

Եր գիակնային նայածըռով (the cadaverous-looking Koord) ... նա կ'երթայ բարուբանդ կ'անէ անպաշտպան դիւ-զեր, կը կոտորէ, կը յափշտակէ, կը սրբազզծէ... նրա միակ տարբինութիւնն այն է, որ խարդախ չէ։

Այդպէս է բնորոշում Աօբերտ Կորզօն, որ ճանաչել է բրդերին Հայաստանում, ոհայկական սարսափներից շատ առաջ, անցեալ դարու 50-ական թւականներին ^{**)}։

Քրդի տարերը պատերազմն է, որի համար նա մարզւում է օրօրոցից ^{***)}։

Աւազակութիւնը նոյնքան էական մի գիծ է բրդի բնու-թեան, որբան պատերազմը — ասում է մի այլ ճանապար-հարդ, Խզարելլա Բիշօպ, որ 1891-ին, հայկական շարժման արշալոյսին հրատարակել է մի գեղեցիկ ուսումնամիտիւն Լօնգուի մեծ հանդէսի մէջ Քրդի սուերը՝ վերնագրով ^{****)}։

Եւ որովհեան իր կրօնը անսուրբ բան չի համարում բրի-տանի գոյրք իւրացնելը, ուստի և նա կողովուում է հայ ու ասորի գիւղացիութիւնը՝ հանգիստ, մարսու խզմավու։

Կողպատել բանի կերպով, շրմիել բրիստոնեաների ունեցածը ամսէւմիս, տարեց-տարի, մինչև որ նրանը իսպա-աղքատանան, սպանել, եթէ զիմադրեն, թողնել մի առժամանակի, որ նրանց դոյլը սորէն աճի, թողնել — բրդական արտայալութեամբ—մինչև ոչխարի բուրդը սորէն բանի, ապա վերսախն կողպատել — այս է ապա պարզ պատմութիւնը քրդի ու բրիստոնիայի յարաբերութեան։

Կողպատմի մի անբուժելի սէր, անփոյթ ու կարծրասիրա-երը պէտք է թափել ուրիշի արիւնը, գիշատիչ և նենդ... Քրդի սուերը — խաւար ու դաժան — բնկած է Փոքր Ասիայ արեւելեան նահանգների վրայ...։

Եւ ահա ալգպիսի անօրինակ, գերազանցապէս բա-ցասական գծերով բեռնաւորւած մի ցեղի հետ է, որ անողոք պատմութիւնը կապել է հայի ճակատագիրը... Քրեթէ ոչ մի հետք կուլտուրայի, գրականութեան, պատմութեան, եթէ չհաշւենք ժողովրդական մի քանի երգերը, ուր երգում, փառարանում են ընութիւնը, երուներն ու հերոսները...։

Մի առաջադէմ, քաղաքակիրթ, կամ թէկուզ կիստ-քաղաքակիրթ պետութիւն կարող եր չեզքաքնել ոյտ գազանային ու աւերիչ տրամադրութիւնները իր հպա-տակ ժողովրդի մէջ, կարող էր անվաս դարձնել վագրի ժանիքները, ընտանեցնել, նստակեաց գոյութեան վար-ժեցնել թափուական հօրդաները և մղում տալ նրանց հոգեկան և իմացական առաջադիմութեան ևաւ, բա-րեկարգ ու էժիմի տակ, արգարե, քրդական բնաւորութեան մի քանի գրական գծերը, բնածին պարզութիւնը, հպարտ անկախութիւնը, ազատաւութիւնը ոգին կարող են զարգանալ յօգուտ ընդհանրութեան, բոլոր գրացիների, կարող են դառնալ մի իրական գանձ ընդհանուր կուլ-տուրական պրօգրէսի համար։

*) James Creagh, Armenians, Koords and Turks, Հրատ. Լանգոն 1880 թ.։

**) Robert Curzon, Armenia, A year at Erze-room, Հրատ. 1854 թ.։

***) B. Fraser, Travels in Kurdistan.

****) Mrs. Bishop, The Shadow of the Kurd, The Contemporary Review, 1891, May and June.

Սակայն, ի մեծ դժբախտութիւն հայի, տաճկի և նոյնիսկ բրդի՝ պետութիւնն ինքը մնում էր քարացած ամբողջ գարերով, մնում էր իրեւ գերազանցապէս անշարժ, յետաձնոց մի ոյժ, որովհետև այդ պետութեան կը զըլ, թիւրք իշխող տարրը, իր ցեղային ու կրօնական աղետաւոր տարկանոնութիւնների շնորհիւ — որոնց մասին հանգամանքէն խօսել ենք արգեն մեր առաջին յօդածների մէջ — թիւրք արքը անընդունակ էր իւրացնելու քաղաքակրթութեան բարիները և տարածելու նրանց հպատակ ցեղերի մէջ թիւրք պետութիւնը, ընդհակառակը, եղել է միշտ բազմերող աւազակային հօրդաների, նու ինքն է յաճախ նիւթել անոցիս և միջցեղային հակամարտութիւն:

Անեցել է արգեօք օսմանեան կառավարութիւնը քրդերի վերաբերմամբ քաղաքականութեան մի որոշ գիծ...

Երբ դարեր տռաջ թիւրքերը հաստաւեցին Փոքր Ասիոյ և Եւրոպայի իրենց նւաճած երկիրներում, Նրանց ընդհանուր հրամանատարի առաջին հոգսերից մինն եղաւ — ինչպէս արգեն յիշել ենք մեր նախընթաց յօդածներում — ընծել հպատակ ցեղերի մէջ ֆէոդալական ազնւականութիւնը և սաեղծել սուլթանական ջինջ անխառն միահեծանութիւն: Ձնջեցին այդ ազնւական յարաբերութիւնները Բօնիսիյի, Մօլդավ-Վալաքիայի մէջ, սակայն հծուաւոր քիւրդիստանում և Անասոյուի արեւելեան նահանգների մէջ, ուր նոյնպէս վազուց դոյլութիւն ունէր աւատապետական դ. է. ր. է. թ. յ. ու թիւնը, շարունակեցին այդ հնադարեած ճորտատիրական կարգերը, թիւրքը չուղեց կամ սիրտ չ'առար րունանալու բիւրդ աշիրէթների այդ հինաւուց իրաւունքների վրայ, վախենալով թերևս ահաւոր հակահարւածներից:

Հասաւ, սակայն, մի վարկեան, երբ քրդական ըմբուռութիւնը սկսեց արտայայտել կարող ցեղապետների բացարձակ ապատամբութեամբ ու սոսկալի կոտորածներով, երբ օսմանեան կառավարութիւնը որոշեց կտրուկ ու ազդու միջոցներով խօսարհեցնել ահարկու աշիրէթների թափեամբիւներին, չեղորացնել բրդական վատնդը, Անցեալ դարու 30-ական թւականների վերջերում էր, որ հաջակաւոր թ. է. դ. ր. ի. ու թ. յ. լ. իր արիւնարուց հօրդաներով սկսեց ջարդի ու թալանի վազուց չտեսնեած մի արշաւանք անպաշտպան բրիսունեալ ցեղերի դէմ — նեստօրականների ու հայերի — կոստորեց մօտ ասանեակ հազար, աւերեց ամբողջ գաւառներ:

Բ. Դուռը, դրդւած մասամբ իր սեփական շահերից, մասամբ էլ Անգլիայի ու Ֆրանսիայի ճնշման ասկ, կազմակերպեց մի ուժեղ հակամարշաւնը, դրկեց բանակ Ռեդրիւսնի դէմ, տեղի ունեցած արիւնահեղ կոիւներ, քիւրդերը ջարդ կրեցին, սարսափելի աշիրէթապետը

փախու, ապաստանեց իր լեռնալին դղետկներից *) մէկում, ապա շուտով գերի բռնւեց, աարան նրան Ատամբուլ ուսկից աբսորեցին կրետէ, ուր և մեռաւ Յազթւան գերեբեյի ահազին գերգաստանի մի մասը սրի անցուցին, միւսները բշւեցին Աֆրիկեան Տրիպոլիս և ուրիշ տեղեր, արգելեց միանգամ ընդմիշտաներանց մուտքը Քիւրդիստան:

Խորտակւեց ամենահզօր քիւրդ Դէրեբեյի **) իշխանութիւնը, Դուռը, սակայն, հետևողական չ'եղու իր ընթացքի մէջ, նա չուղեց կամ սիրտ չ'արաւ արշաւելու բոլոր աշիրէթների դէմ, խորտակելու բրդական գերեբեյութիւնը, որ իբրև անկախ մի իշխանութիւն թիւրք կայսրութեան ստիմաններում և տոգորւած տակը թեամբ գեղի գերիշխող տարրը, մի մշտնջենաւոր սպառնալիք էր այդ վերջինի համար:

Այսուամենայնիւ, Բնդգրիսանի օրերից ի վեր սկսւեց սաստիկ ու սիստեմատիկ հալածանքք քիւրդ տարրի դէմ, որ յարատելեց մի առժամանակ:

Եկաւ այլ շրջանու նոր հոգեր և նոր քաղաքականութիւն քրիստոնեայ ազգերի ըմբուռացութեները կայսրութեան մէջ միշտ աւելի յաճախացան և սպառնացին կործանել ամբողջ պետութիւնը Մին-միւսի եռևից անջառւեցին Եւրոպական թիւրքիոյ մի շարք բըհատունեայ երկիրներ և... դժգութեան ու խմորումի ալիքները կամաց անցան նաև — Փոքր Ասիա, Հայաստան Ալթունական թւականներից արգեն իսկ ծայր էր առջիւնական վատնդը... Ապստամբութիւն և վայրուն ճակատամարտներ Զէյթունի մէջ, ժողովրդական ցոյցեր և Պալումում էին մօտիկ ապագայի մէջ թիւրքահայաստանի անջառութեան ևս, „Մօսկովի“ նոր աըշաւանքը... Ո՞րն էր այն պատնէշը, որ պիտի գէմ գրւէր այդ սպառնացող վատնգներին, ո՞րն էր այն ոլժը, որի միջոցով կարելի էր սատիճանաբար և առանց դրսի ուշադրութիւնը հրաւիրելու, ճարակել հայ արքը, Նւազեցնել նրա թիւրք և այդպիսով վերջ տալ միանգամ ընդմիշտայիկան նենդրին:

— Քիւրդն է ը:

Պէտք էր ուրեմն վերստին սիրաշահել և բաջալերել այդ հզօր աշիրէթապետներին, պետք էր կառուցանել հայկական խնդրի հողի վրայ բըդական ճնշութերի մի յատուկ սիստեմ...

Կառուցւեց այդ սիստեմը մի դիւային հնարագիտութեամբ և հասաւ իր կատարելագործման՝ սուլթան

*) Այսօր տակաւին կանգուն են քիւրդ աւատականների հինաւուրց և կիսաւեր գղեակները:

**) Դ. է. է. թ. յ. լ. ի. ոյյն իմաստն ունի, ինչ որ Փէոդալ աւատապետ Գերեց հովիտ, գերեբեյ բառացի՝ հսկուի իշխան, հովտի պետ:

Համիդի օրով, պատկւեց 90-ական թւականների սկզբը՝ ներում մի դժոխային, ոճքանիւթ հաստատութեամբ, որի անունն է՝ “Համիդի Հեծելազորը”...

Տեսանը արդէն, թէ ինչպէս—60-ական թւականներից իսկ — ը. Դուռը մի ձեռքով շոյում էր ինտելիգենտ հայութիւնը, տաղիս էր նրան Աահմանադրութիւն, մի աեսակ պարզամենտ և այլ հնչուն, շլացուցիչ ընծաներ, միւս ձեռքով աւերում էր բուն Հայաստանը, մաշում ու հիւծում էր միլիոնաւոր հայ ժողովուրդը քրդական խափիրութեան և սեփական պաշտօնեաւթեան ծիրաններում...

Դարձեալ.—մի խելացի և շատ թէ բիշ բաղաբակիրթ պետութիւն այլ միջոցներ ի գործ կը դնէր՝ հայկական և նման վատանգների առաջն առնելու, — նա կը դիմէր հիմնական ռեֆորմների, կը կանխէր արտաքին միջամտութիւնները, կը սանձէր միաժամանակ այդ բիւրդ աւազակաբարոյ հօրդաները, որոնք ոչ միայն իրենց ուրոյն ֆեօդալական նիրաւակարգով՝, իրենց յատուկ տուրքերի ու իրաւասութիւնների սիստեմով մի յարատե վասնգ էին կայսրութեան համար, այլ և իրենց շարունական արշաւներով, թալանի ու սպանութեան ամենօրեայ ոճիրներով դատարկում էին երկիրը արդիւնաբերող ձեռքերից, անապատ էին դարձնում ամբողջ գուտառներ, խափանում առեւտրի ու արդիւնաբերութեան ձեռնարկները, թշւառ ացնում հարկատու ազգարնակութիւնը և այդպիսով ցամաքեցնում տուրքերի, հասոյթի, պետական հարստութեան ազրիրները.

Ինչպէս էին հայ-բարեր գույն յարաբերութիւնները...

Ի՞նչ կարող է լինել ճորտի և տիրոջ, գառան ու գայլի յարաբերութիւնը մի այնպիսի բաօսային իրաւակարգում, ուր բորենիները ընկերակցում են գայլերին՝ պետական պաշտօնեալի համագգեստի տակ...

Եղել են, կան այսօր ևս բիւրդ ցեղեր, համեմատաբար աւելի հանգիստ, խաղաղասէր ու լաւ տրամադրւած դեպի հայերը Եղել է ժամանակի, երբ այդ հանգիստ բիւրդ համայնքների պետքերը խնդրել են նոյնիսկ հայ հոգեւոր առաջնորդների ու էփէնախների պաշտպանութիւնը ընդգեմ թիւրքական կամայականութիւնների կամ թէ ուրիշ գիշատիչ բիւրդ ցեղերին

Հայ աղաներն ու հարուստ վաճառականները սիրով կատարում էին այդ խնդիրը, ի գործ էին դնում իրենց ազգեցութիւնը վաղիների ու փաշաների մօտ՝ խաղաղասէր բիւրդ ցեղերին հօգանաւորելու համար. և այդտեղ նրանք զեկավարում էին պարզ նիւթական հաշիներով։ Հայ վաճառականները շարունակ առեւտրական յարաբերութեան մէջ էին այդ խաշնարած, մեղմաբարոյ և համեմատաբար աւելի աշխատասէր քրդերի հետ, մատակարարում էին նրանց կենսական մի շարք անհրա-

ժեշտ պիտոյքներ, կտաւ, չիթեր և այլն և փոխարէնը առնում էին հումքերը՝ իւղ, պանիր, բուրդ և այլն *).

Մասամբ այդ հանգամանքը ստեղծեց հայերի և որոշ քիւրդ ցեղերի միջև բաւական սերտ բարեկամական յարաբերութիւն, վերջապէս, յայտնի է, որ բացի ոչ մահմեդական „եղեղդի“ աղանդաւորներից, զըզըւթաշներից—այլ և այլ տեղերում գոյութիւն ունին բիւրդ համայնքներ, որ երբեմնի հայ եր են, այսօր իսլամացած և բրդախօս, որոնց մէջ ժամանակ առ ժամանակ խօսել է անշուշտ արիւնային ազգակցութեան ձայնը յօգուտ իրենց մայր ցեղի, Այսպէս թէ այնպէս՝ մենք աեսնում ենք երբեմն-երբեմն բիւրդ ցեղեր հային դաշնակից, տեսական միջցեղային պատերազմներում՝ հայերի մասնակցութիւններու հայերն այն աստիճան հաւատարարութիւններու ունեին դէպի այդ ցեղը, որ իրենց անասունները յանձնում էին գրանց հայիւներին պահելու, հայերի տան սպասառուները, աղախինները, երկրագործական մշակները մեծ մասամբ եղբայրներ էին, Դրանք կատարում էին հայերի մի բանի իր հական արարողութիւնները, պահում էին և Աարգոսի, և Գելորդի պասերը, զոհ էին մատուցանում հայոց նշանաւոր ունտատեղիններում և և Գրիգոր Լուսուորչին ու Գաւիթ մարգարեին համարում էին Աստուծոյ ընտրեալների ամենալինաւորը, Եղբայրները համարեայ բոլորը գիտեն հայերն խօսիլ...

Մի կողմ թռնելով հայ-քրդական բարեկամութեան այդ սպօրադիկ արտայայտութիւնները — երկու ժողովուրդները իրենց ամբողջութեան մէջ կանգնած էին դէմ առ դէմ իրրե անհաշտ հակոտնեաներ և ժամանաւորապէս հայ տարրը միշտ եղել է տոգորւած մի խոր, աւանդական ատելութեամբ դէպի քրդութիւնը։

Խա ա փ ի ր ու թ ի ւ ն ը **) ինքնին արդէն մի սարսափելի չարիք էր, որ հնուց ի վեր ծանրացած էր երկու դրացիների յարաբերութեան վրայ, տալով մէկին տիրոջ,

*) Ըստ չի անցել այն օրերից, երբ այդ վայրերի մէջ թագաւորում էր այսպէս կոչւած բնա ա ա ն տ ե ս ո ւ թ ի ւ ն ը (Naturalwirtschaft), Ասդ մասին մի բանի հակիրճ տաղեր ունի Ա է լ ի թ գ ա գ է ն գ ե ռ 1872 թւի իր պարուկական թղթակցութիւնների մէջ (Աշակ 1872 թ.). Թիւրք-պարսկական սահմանագծի վրայ, ասում է նա, վաճառականութիւնը սոսկ նիւթերի փոխանուկութիւն է, առանց գրամի շրջանառութեան վաճառականութիւնը հայերի և հրեաների ձեռքումն է. հայերը քաղաքների մէջ մանրավաճառ են և արհեստաւոր՝ հիմոն, գերձակ, սոկերիչ և այլն. իսկ գիշերի մէջ հայ կանայք գործում են բրդից վերաբերուներ (ապայ), շալվարներ, կապերտներ և այլն. Հայ վաճառականները տաղիս են բրդերին կտաւ, չթեր և ալ հագուստի ու ուտեսափ պիտոյքներ և առնում են նրանցից հումք բերեր, բուրդ, իւղ, պանիր, ոչխար և այլն

**) Խափիթ — ապօրինի տուրք։

Հրամանատարի տիտղոս, միւսին՝ ծառայի, սարկի խաչի բարձրագույնը, վեհապահական հարկաւութեան սիստեմը հայաստանի մէջ համատարած մի երկոյթ չէր, սակայն այն ընդարձակ հայ գաւառներում, ուր տիրում էր նա, հայ աշխատաւոր ժողովուրդը դրւած էր մի անել, դժոխային կացութեան մէջ ենթակայ խափիրուու բիւրդ բէյերի անսահման կամայականութեանց Այդ բէյերը իրենց իրենց տէր էին համարում ու այ եւ աի կեանքին ու ստացւածքին: Հայ աշխատաւոր շինականի բոլոր այլազան բերքերից — հացահատիկներ, բուրդ, ոչխար, մեղր, կարագ, ապա և ձեռագործ արդիւնքներ, դուզա, կապերտ, վերարկու և այլն — բոլորից էլ բաժին ունէր քիւրդ աղան, բոլորից նա առնում էր տուրք՝ կամ դրամով կամ թէ բնական բերքով, *in natura*.

Այդպէս էին սահմանւած հայ-բրդական յարաբերութիւնները այնքան դարերից ի վեր: Արայ հասաւ ուուս-տաճկական պատերազմը 1878-ին, որ մի ահարկու, մի չտեսնւած ծաւալ տւեց բրդական վայրագութիւններին՝ ընդդէմ հայ անպաշտպան ույեայի: Արդիւլ Համբդի կառավարութեան գիւային սադրանքներով վառւեց կրօնական մոլեռանդութիւնն ևս նօմագ, արիւն ուուշտ խաժամուժի մէջ և սա իր հոգեւոր առաջնորդների — Ըեյխ Զէլալեդդինի, Ըեյխ Իբադուլլահի — հրամանատարութեամբ էր, որ տասնեակ հազարաւոր հրոսակներով գրոհ էր տալիս Տէր Առկասօվի գնդերի գէմ բայց այդ մասին կը խօսենք յետոր:

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԳԵՈՐԳ ԶԱՎՈՒՅԻ ՄԱՀԸ

Ամեն անգամ որ կը մօտենայ մայիս 27-ը, չարաշուք յուշերը նորէն կ'արթննան ու կը մզւինք վերստին ապրելու հայկական տանջանքները:

Տարեդարձ մըն է այդ օրը — տարեդարձ մ'է մահւան, որ նոյնքան ահաւոր է, որբան եղաւ 33 կոկներու մասնակցող իր հերոսական կեանքը, միշտ հալածական, միշտ լեռներու գլխին, ձորերու մէջ, քարերու վրայ:

Գէորգ Զավուչը — դա մեր ցեղի վրէժն էր, յեղափոխութեան շահմեզիդան...

Իր համակրելի, անվեհեր գէմքը և մանաւանդ արծիվ հայեացը, որ կը թափանցէր հոգիներու մէջ — հմայք մը ունէին Երկու ծայրայեղութիւններ միաժամանակ կ'իշխէին անոր մէջ Ծայրայեղօրէն խիստ էր նա դէպի թշնամին, դէպի դաւաճանը և անհունօրէն բարի՝ դէպի խեղճը, դէպի ընկերը:

Անուս էր, բայց կեանքի դժնդակ փորձառութիւնը անոր մէջ դրած էր հուետորական լեզու մը և գոյութեան կուրի ամենամեծ գիտակցութիւնը...

Դուք տեսա՞ծ էք մեր Սասունի լեռներն ու ձորերը, ուր սկզբն ու արիւնը այնքան շատ են, որ լեռները ձորերուն հաւասար են. դուք տեսա՞ծ էք մեր բորիկ, տղլոր Ճմբերը...

Ո՞վ էր դրեր անոր անուս բերնին մէջ՝ այդպիսի ազգու, բանաստեղծական լեզու...

Ո՞վ էր դրոշմեր անոր հոգուն մէջ այդ անսասան հաւատքը, անսահման անձնւիրութիւնը և յեղափոխական կատաղի թափը...

Այդ հարցին թողի պատասխանէ մեր դարաւոր, արիւնոտ պատմութիւնը, այդ առեղծւածը թող լուծէ ո՞ւաշնակցութիւնը^ա, որու զօրութեան միակ գաղտնիքը պէտք է փնտրել անսասան հաւատքի ու անձնւիրութեան մէջ:

* *

Ա. Կարապետի անտառին մէջ մենք բաժնւեցանք իրարմէ, արտակարգ պարագաներու մէջ — այսպէս սկսաւ իր պատմութիւնը մեր ընկերներէն մէկը:

Համար երեք անգամ ետ դարձաւ ողջագուրեւելու համար, ու վերջին անգամ, ա'լ անզօր եղաւ զսպելու իր արցունքը — յեղափոխականի արցունքը:

Ա. Ան, Յեղափոխութիւն, բո տունն աւրի, ինչո՞ւ կը միացնես ու ինչո՞ւ կը բաժնես^ա — ըստու

Քանի՞ սրտեր միացուցած ու բաժնած էր ան, վերստին միացնելու համար մահէն վերջ Քանի՞ քանի՞ թանկագին զոհէր ու արիւն...

Խեղզ Համար կը միացնելու անհաջողութեան մը, կարծես, հասկցած, գրեթէ շօշափած էր մահը, որ պիտի գար հետևեալ օրն իսկ, և որ, մինչև այդ ժամանակ խոյս աւած էր իրմէ:

* *

Սուլուխ գիւղը պաշարւեցաւ յաջորդ օրը: Մատնած էին կուգան ու միշտ կուգան օսմ. զինւորները, մասյլ սարսափելի ու վախկոտ նայւածքովի Փոքրիկ վերերաններու խմբակը հազիւ հազ ժամանակ ունեցաւ ինքն զինք գտնելու, դիրքեր որոշելու:

Կոխիւ կըսկսէր ա'լ — զժոխային կոխւ մը, որ մեր հայդուկային դրւագներուն վրայ փառաւոր էջ մըն ալ կ'աւելցնէ:

— Մա'րը... հրամանտարն է, որ սուրը ձեռքին կ'ընթանայ:

Գրեթէ առաջին բաղնումին ինկած էր Համար:

— Քէսուէ, դաւաճան, պաշտպանէ՛ ինքինքդ, գոռաց հայդուկ մը:

Բայց նա խրոխտ է, կը բալէ միշտ, կը բալէ հրամանտարի իր պարտականութիւնը կատարելու համար...

Գնդակ մը սուլեց ու հրամանտարը գետին գլորեց... Յառաջ անցաւ զինւոր մը, կոիւը ղեկավարելու համար,

ինկա՞ւ, եկաւ երկրորդը, ինկա՞ւ, յաջորդաբար եկան
ու ինկան երրորդը, չորրորդը...

Աւելի սրատիեցէք եր ու դիւցազնական՝ կոհւը միւս
փրօնդին վրայ, ուր Գալէն, միս մինակ, կամուրջին անցըը
կ'աշխատէր պահպանել գիւղի բնակիչները աճապա-
րանքով գուրու կը նետէին. մանուկները՝ լացով, կակա-
նով, պառաւները՝ անէծքով, երիտասարդներ՝ ցաւագին
ժպիտով մը կ'անցնէին հերոսական դիմագրաւումի
մէջէն. Մի սրտաձմլիկ, վաեմ որան՝ կար այդ տողան-
ցումին ու գերբնական ուժ՝ մարտիկ հերոսին մէջ, որ
վերջապէս ա՛լ ինկաւ ուժապառ:

Միւս կողմէ, միւս ընկերներու պաշտպանողական
ողակը կը սեղմւէր, զինուրոներու յարձակողական շղթան
կ'ամրանար, ու բէշ մըն ալ—պիտի մերկանային սուին-
ները...

Մահւան ու հայրենիքի գերբնական հոգին անգամ
մըն ալ խոսեցաւ. Հայդուկները հաւաքեցին իրենց վեր-
ջին ուժերը ու բջուրեն դեպի վար խուժելու որոշումը
տարին Խորհրդակցութիւնը կարճ եղաւ... բաշեցին ասս
կրտկանցները ու միահամուռ գրոհ մը տէին՝ շղթան
խզելանցնելու համար գնդակներու միահազոյն ճար-
ճատիւնը, կատաղի, մոլեգին յարձակման թափը, կա-
րողացաւ ճեղքել ամրակուռ շղթան ու զանոնք նետել
առաջացող խաւարի դիրկը:

Կրակը տկարացաւ, ձայները հետզհետէ դադրեցան
ու ամեն ինչ լուց այնպիսի հանդարտութեամբ, որ
կարծէք ոչինչ պատահած էր:

* *

Կէս օր եւ Կիդիչ արև մը կը խաչէ ամեն ինչ Մա-
հաբոյր անդորրութիւն մը պատած է խոպան դաշտը:

Ահա ճամբորդ մը, որ կ'անցնի քրտնած ու տապէն
խեղդւած, կը կենայ, կը նայի, նորէն կը շարունակէ
քալել, բայց անհանգիստ կ'երեի, Յուսահասական
ճիչ մը, օրհասական աղաղակ մը վերստին խոռոչեց
զինքը, ճամբորդը ուղղւեցաւ ձայնին կողմը:

Բոյսերու մէջ փաթթւած, արիւնու ու դեղ դէղ
դեղնած գեմք մը, որ հազիւ կը չնչէր:

— Քիչ մը ջո՛ւր, յանուն Աստուծոյ:

Ճամբորդը, որ քիւրդ մըն եր, ետ գարձաւ, գլխարկը
զրով լեցուց ու նորէն եկաւ, աւաւ մահամերձին, որ
խմեց գլութէ ագահաբար ու ծանր տնբոցով գլուխը
թերեց:

— Արեւոդ մտա՛ղ, խորդօ, ո՞վ ես դու, ինչո՞ւ վի-
րաւորւած ես:

— Ես... Գէ... որդ... Զա... վուշ...

Լաեց: Հեծեծանք մը, վերջին հառաչ մը, ու հերո-
սական շրմները իսպառ լուցին:

Ճամբորդը, աղահար՝ վերցուց անոր բարացան

գլուխը, գրկեց: Համբուրեց ու լացաւ Լացաւ, ինչպէս
պիտի լար իր սեփական եղբօր, իր զաւկին վրայ: — ո՞վ
կընայ հասկանալ մահւան գաղտնիքը, ուր թշնամի սըր-
տերն անգամ կը ձուլւին:

— ո՛չամբո՛րդ, գնա՛, պատմէ՛...

Ու ճամբորդը պատմեց այս հերոսական ու միան-
գամայն եղերական դրւագը այնպիսի սրտառուց բառե-
րով, այնպիսի առասպելական խանդավառութեամբ, որ
քարերն անգամ լաց եղան:

* *

Մշոյ հայոց գերեզմանատան մէկ անկիւնը, առանց
յուշարձանի, առանց բարի, անշուք հողակոյա մը կայ,
ուր թերեւս բանի մը ծաղիկներ կը բուսնին, ապա կը
չորնան ու այս է բոլորը:

Այսափը Թագ միայն իբր յիշատակ իր երկար դիւ-
ցազնամարտէն, ազգէն ու ժողովրդէն:

— Իսկ, ամեն անգամ որ, հերոս, հայրենի ձորերը
լեցին սոկորներով ու արիւնով, մեր սրտերու մէջ ու-
ժեզօրէն պիտի հնչէ քո վայրենի. հերոսական աղաղակը
Մեր սրտերու մէջ, ուր բեզի համար կերտած ենք քո
կատած ամենամեծ յուշարձանը — արիւնի ու վրեժի
յուշարձանը:

Ա. ԶՆԴԻ

Կարին, 25 ապրիլի

թ ե լ թ օ ն

Ի Ս Բ Ա Ն Դ Ը

IV

ԱԱՏՌՈՒ ԿԱՄՔԸ Է, ՄԷՐԻԿԻ:

—

Յաջորդ առաւտա բանդի բակում կաղմւեց նոր էտապը՝
աւելի թանձր, աւելի մռայլ ու մահաշունչ. Նոր բանդը
իր ծոցից գուրու մզեց նոյնպէս գունատ, նոյնպէս հիւծ-
ւած մարդկանց մի բազմութիւնը, որոնք եկան խառնե-
ցին հեռաւոր վայրերից հասածներին, միասին անծանօթ
հարիզոնների ճամբան բռնելու:

Ճաշին մօտ՝ բանդի լայն դարբասը բացւեց յուղաբ-
կաւոր հանգիսաւորութեամբ և սուխների պաշ շղթայի
մէջ պարփակւած բազմութիւնը առաջ շարժւեց բան-
դապետի ու իր օգնականների սաստերով, պահակների
բիրտ աղաղակներով ու զինուրների զսպւած, բայց ինիս
բացականչութիւններով դռները փակւեցին և կալա-
նաւորների բազմութիւնը սուզւեց բազմամարդ քաղաքի
փողոցներում՝ լոյս աշխարհի առաջ բաշ տալով բանդերի
մութ գաղտնիքը: Մի բանի բովք գեռ լսում էր շըշ-
թաների խուլ շոհնդը, զինուրների ու բազմաքային պա-

հակների տեսդու, կարծ սաստերը, ուների թաւ գրընդիւնը, որպէս մի անորոշ խուժապի յեղյեղութեար, ապա կամաց կամաց ամեն ինչ լուց:

Էտապը գնաց...

Ու տանջանքի, անէծքի այդ կարաւանից յետ մեացինք մէկ ես՝ որովհեաև հիւանդացայ ու մէկ էլ ճամբին արիւն փսխող լեռնականը, որովհեաւու... մեռաւ:

Լուսամուտիս տակից անցաւ նրա գագաղը, մի հին խարխած դագազ, որ ճռում էր ու տնբում, ասես վաղուց հետէ դադրած իր անհանոյ բեռներից: Մեծ դարբասը նորից բացւեց շառաջիւնով, դագաղը դուրս գնաց ու լեռնականը վերջուապէս ազատ, առանց ցաւի գնաց հանգչելու մի ամայի բարբարոս ըլլի լանջին, ուր անտէր գերեզմանների վրա է կէս գիշերներին խաւարի հետ հօղմերն են լալիս ու կոծում ժայռերի կրծքին և գայլերն են թափառում դիակների հոտից:

Եետոյ՝ բանդային գրասեննեակից մի գիր կ'երթայ դէպի Առվիասեան լեռները, օրէնքի պահանջած բոլոր ձեւերով համար, ամսութիւ ու տարեթիւ, ստորագրութիւն ու կնիք: Մի ձորում, մի հօվտում կորած գիւղի տանուտէրը ստանում է այդ գիրը, գնում է բաղինելու մի խղճուկ առվի դուռ: Դուրս է գալիս մի պառաւ, երկուտակ ծալւած, գեմբը խորշոմած, աչքերը հանդած: Նա ուրախ է սակայն, տանուտէրի ձեռքին գիր կայ, զաւակից լուր է անշուշտ, և խորշոմները բացւում են և աչքերը փայլ ստանում և շրթունքները դողդողուում են ու նա ակնապիշ, հեալով մնում է տանուտէրի շրթունքին:

Տանուտէրը լուռ է. Նա իր երկար միրուբն է խառնում և աչքերը գեանից չի հեռացնում: Պառաւն սպասում է անհանգիստ, բուռն խոռվագով:

— Հը՛, խէր լինի տանուտէր, տղաս...

— Աստծու կամքն է մէրիկ, ընդհատում է նրան ծերուկ տանուտէրը աչքերը սրբելով, տղագ... Էչ, Աստծու կամքն է...

Էլ բառ պէտք չէ. պառաւը նախ քարանում է իր սեղում, ապա թափով երկու քայլ առնում դէպի առաջ, բաց է անում իր աւերակ կուրծքը, ուր մայրութիւնն է մարել չորացած ստիճներն է փռում Աստծու առաջ և աշխարհի արդարութիւնն անիծելով մի բուռն հող է ցանում երկնքի ճակտին:

— Հող մի՛ ցանիր, մէրիկ, Աստծու կամքն է նրա կամքով ողպիօն^{*)} եկաւ մեր սարերը. ա՛հ, զակօ՞ն բացականչում է տանուտէրը, թափահարելով իր ալեզարդ գլուխը:

Մայրն այդ չգիտէ, նրա ի՞նչ փոյթն է թէ զակոն եկաւ իրենց սարերը. նրա որդին իգիթ էր և բանդում չզիտի մեռների:

Պառաւը ծածկւում է առվի ներսում, մինչդեռ տա-

նուտէրը գեռ երկար մնում է կանգնած՝ լուռ, նայում է դրանը, ասես սպասելով, որ սգաւոր կինը նորից երեայ. ներսից բարձրանում է որդեզուրկ մօր սրտապատառ ողբն ու կոծը, փոքրիկ առվլը հեկեկում է իր պառաւ տիրուհու հետ. տանուտէրը վերստին սրբում է աչքերը, ինչ որ մոմում ըթի տակ, ապա հանդարտ հեռանում է խորհելով միշա զակօնի մասին, որ իրենց լեռներն է լուս ընկել ինչպէս մի անծանօթ հրեշ և լամփում է, լամփում է խորհում է և ըմբռնել չի կարողանում, թէ ի՞նչպէս այս վայրի լեռներում, ուր զակօն չգիտեն, իգիդութեան աշխարհ է, ուր արիութիւնն էր իշխում միայն, որպէս միահեծան օրէնք, յանկարծ լոյս ընկաւ այս ահաւոր, այս խորտակիչ զակօնը: Ճնշում է ծերունուն և հակասութիւնը իգիդութեան ու զակօնի, լեռների խրօսա, անսանձ ազատութեան ու խորթ, անզոր ձեռքի, որ իջնում է յանկարծակի և երբ բռնում է մէկի լանջից միայն բանդում ու գերեզմանումն է բաց թողնում: Ծանր, գժւարահանգոյց առեղծւած, ո՞վ կարող է լուծել...

Եւ մենաւոր մայրը իր խղճուկ տուլում շարունակում է հեծկլտալ, ձշալ և ողբալ Գալիս են կանայք և հեռաւոր առւլներից, մեռած տղամարդի գովքն է հնչում պէս պէս ձեւերով, նրա բօյ ու բռւաթը, նրա աչք ու յօնքնը, նրա իգիդութիւնն են երգում ու լալիս Այսպէս ժամեր, օրեր, ապա ցրիւ են գալիս և իւրաքանչիւրը մեկնելիս չի մոռնում մենաւոր պառաւին ասել որպէս գերագոյն սփոփանք.

— Աստծու կամքն է, մէ՛րիկ...

* * *

Բիջօ՛, բիջօ՛ *)...

Այսպէս էին կոչում նրան բանդում, որովհեաև գեռ բոլորովին պատանի էր, մանուկ տեսքով:

Ո՞վ էր այդ վրացի աղան. ո՞վ գիտէ...

Բիջօ բիջօ...

Նա այնպէս կայտառ էր, որպէս գարնանային մատաղ այծեամը և այնպէս ուրախ ու անհոգ, ինչպէս ձիու մատաղ բռւակ, կենսալից ու խայտացող, որ գեռ չգիտէ սանձ ու թամբ, ասպանդակ ու բեռ և սլանում է խենթ հօղմի պէս:

Եւ այդ խենթ հօղմը շղթայւած էր:

Տաննեւթ տարեկան պատանի էր նա, ուղղաձիգ ու գալար իրանով, բարձր, գիրդ պարանոց, խպառ անմազ գէմք, միայն վերին շրթունքին նուրբ աղւամազ ու այդ շրթունքը միշտ մի փոքր վեր ցցւած, միշտ ժպատակ, կատակելու պատրաստ: Աչքերի մէջ շող ու ցոլքի ծով կար ու ամբողջ այդ մանկական, այդ անուշ գէմքից արշալոյս էր կաթկաթում:

*) Օրէնք՝ ոռւսերէն:

Իւնդ բերած օրից նրան շղթայեցին. ուստանքիու պարագայ էր, բայց ի՞նչ արժէք ունէր տասնեռութ գարունների համար բանդն ու շղթան. նա իր ուժեղ, լիբը ուներով խաղում էր ժանգուս մետաղի հետ, ինչպէս խաղաղիկ և ներսից էլ անդադար լւում էր նրա արծաթահնչիւն բացսիրտ ծիծաղը:

Նրան ձերբակալել էին մի լրտեսի վրայ նետւած ուսմբի առաջ բերած խուճապի ժամանեակ: Ամենքս գիտէինք, որ անմեղ է, անմասն այդ ահաբեկումի գործում—բանդը միշտ գիտէ ճշմարտութիւնը Ու ինքն էլ իր անմեղութեան գիտակից թւում էր միանգամայն անտարբեր դէպի իր վիճակը, նոյնիսկ չէր հասկանում թէ ուր է, ինչո՞ւ:

Հէ՞ որ տասնեռութ տարեկան էր...

Եւ նրա հետ մենք էլ կամաց կամաց մոռացանք և՝ նետւած ուսմբը և՛ չարագուշակ շղթաները: Պնաց միայն շող ու բոյրով լի պատանին, ժպտուն, կայտառ, կենսալից, որպէս գարնանային այժեամը: Ու ոչ ոք նրա պէս չէր պարում շղթաների պարը⁴... կարճատե զրուանքի ժամերին, երբ մի բարեմիտ վերակացու աչք էր գոցում անց ու դարձածի վրայ, շղթայակիրների շրջանը մէջ էր առնում պատանուն, հնչուում էր լեռնականների միալար եղանակը և նա պարում էր իր ոշղթաների պարը⁵: Առների համաշխատ շնորհալի շարժումներով՝ ահապին շղթաները զրնգում էին մերթ մեզմ, մթթուուն ու լալագին, մերթ յորձանուտ ու կատաղի, ինչպէս դահավեժ խորտակւող ջրվեժ:

— Հայ հօ, հայ հօ, հայ հօ, հայ հօ, հնչուում էր չորս կողմից ուժգին ծափերի հետ և մշտաժպիտ պատանին, այտերը կարմրած, աչքերը բոցավառ, մրրկի պէս շըրջաններ էր կատարում ու շղթաները զրնգում էին, լալիս, բըրջում ու ճչում...

Բանդն էլ իր ցնծութեան ժամերն ունի...

* * *

Այն առաւօտ օրն այնպէս պայծառ էր, արևի ցոլքերն այնքան առատ — ողջ օդը շողջողում էր ոսկու անձրևով: Բակում մի շղթայակիր պատանի էր կանգնած և նրա շուրջը երեք զինուոր հրացանները կազմ ու պատրաստ սպասում էին:

— Իիջօն է, շշնջացին չորս կողմի լուսամուտներից:

Այո՛, նա էր, այծեամի պէս կայտառ աղան:

Բանդապետը դուրս եկաւ գրասենեակից, մի ծրար առլով զինուորներից մէկին՝ աւելացրեց:

— Զգոյշ, աչալուրջ եղէք, զինուորական ժամարան է, Հրացանները շրիչրիսկացին, փամփուշտները դրւեցին, շղթաները շառաչեցին և մեր անուշ, մեր նազելի որիշոն⁶ առաջ անցաւ զինուորների հետ:

Զինուորական դատարան...

Գիտէինք, որ այդ կարգի մեղադրանքները այդպիսի դատարանով են դատաւում, բայց և այնպէս այդ երկու բառը՝ ինչպէս մահու զոյտ ուշքեր, անցան բոլոր կամերաների առաջից, ներս նայեցին բոլոր դռների ծակերից, բոլորին հոգին փշաբաղեցին:

Մռացել էինք պատանուն սպառնացող դատը, որ այժմ ցցւեց մեր առաջ իր արիւստ մզմաւանջով ու ողջ բանդը անհանգստութեամբ բռնւած՝ սպասում էր:

Ճաշին մօտ կրկին շղթաների շառաւշ, բիջօին յետ բերին:

Բանտարկեալները բոլոր յարկերում խռուեցին լուսամուտների առաջ վիզերը ձգած. աչքերի մէջ բռնւ հետաքրքրութիւն, նայում էին բակին, ուր պատանին կանգնած էր Ու ամեն կողմից աչքի, ձեռքի նշաններով աշխատում էին իմանալ դատասատանի ելքը: Իիջօն երկար ժամանակ լուս էր, ասես ոչինչ չէր տեսնում, այլ նայում էր ոտների առաջ խաղացող կատախն: Ապա յանկարծ զլուիթը բարձրացրեց և աջ ձեռքի մի ջլուս շարժումով շրջան արեց իր պարանոցի չորս կողմը:

Կախաղան... կատուն փախաւ ոտների առաջից. գիտողները խորունկ հառաջանքով յետ յետ բաշւեցին լուսամուտներից, մինչդեռ երիտասարդը դեռ կանգնած իր տեղում, զինուորների հետ, սպասում էր հրամանի:

Կենդանի ու առողջ, կայտառ ու ժպտուն երիտասարդը գնաց դատարան ու մի բանի ժամից՝ վերադարձաւ սեփական պատանը ուսինս Եւ անօրինակ մի սպիտակութիւն, որ այնքան յիշեցնում էր պատանի գոյնը — ծածկել էր նրա գեմքը, ուր ոչ մի ջիղ չէր շարժուում և անդրշիրմեան մի բան խաղում էր ճակատին. Նրա պազ, անթարթ հայեացը ուղղուած էր մի տեղ, ուր մենք այլ ևս չէինք համարձակուում նայել: Այնքան հեռու ու անըքան սարսափելի էր այնաեղը: Ահաւոր մի անդունդ յանկարծ բաժանեց մեզ նրանից, որ դեռ մի բանի ժամ առաջ մեր բախտակիցն էր Դայտի այժմ մեզ թւում էր անձանօթ, անյայս մի կտի, մի այլ աստղի բնակիչ, որ չգիտես ինչ մի անօրինակ ու սոսկալի խորհուրդ ուներ իր աչքերի մէջ, իր բայց գունատ ճակատի, իր դալուկ այտերի ու պինդ սզմած շրմունքների վրայ: Կարեկցութիւն չէր, որ մեր հոգիները համակեց, այլ մի անորոշ ու խաւար սոսկումի: Թէ՝ առնջանքի զգացմունք, որ խեղդում էր բոլորին: Վախսենում էինք... ու սպասում, թէ ահա նա յանկարծ բաց կանի այդ փակ շրմունքները ու կը ճչայ... ով գիտէ ի՞նչ սասանեցուցիչ բան, որից մարդ քարանաւ կարող է:

Հեռանում էինք լուսամուտներից ու կրկին մօտենում, կրկին նայում հայ լուս էր, նայում էր հեռուն ու սպասում կատուն յետ եկաւ, մօտեցաւ ու խալում էր նրա ոտների հետ, մոմուում էր, քսւում շղթաներին, դռնչը արորում նրա կօշիկներին երիտասարդը ժպտաց, գոնե մեզ թւաց թէ ժպտաց, որովհետեւ բերանի երկու

անկիւններում երկու ծալքեր առաջացան ու իսկոյն անցան։ Յետոյ շղթաները շառաչեցին նախ ուժգին, ապա կամաց կամաց նւազու երիտասարդը գնաց ծածկեց մոհապարտների հեռաւոր զնդանում։

Երեք օր յետոյ՝ կէս գիշերից անց, մի սրտապատռութիւն եկաւ զարկւեց մեր բոլոր դռներին ու մարեց . . . նրան կախնեցին։

Այսուհետեւ օրեր ու շաբաթներ, ամեն անգամ երբ լուսամեռտից նայում էի, միշտ տեսիլքը նոյն աեղութիւնը արևի շողերով ողողւած, ճարմակ եթերային մի եակ, որ նայում էր խորհրդաւոր հեռուն, ուր իջաւ անդարձ: Ու կէս գիշերից անց՝ երբ բամբներն էին լուիս դրսում, մենք միշտ լսում էինք նրա վերջին ճիշը, սրտապատռութիւն խելացնոր։

Ու գարձեալ մի գումառար գիր գնաց մի հեռաւոր գիւղ, գարձեալ մի որդեկորոյս մայր կակծաց, ճշաց, ողբաց իր զաւակը . . .

— Աստծու կամքն է, մէրիկ—ասացին հարեւանները!

ՏԱՐԱԳԻՐ

Վ Ի Շ Ա Գ Ր Ա Ւ Թ Ի Ե Ր

Pour les Peuples d'Oriente իր վերջին համարի մէջ հրատարակում է անտիպ մի գրւածքից բազւած՝ չափազանց հետաքրքրական մի ստատիստիկ Սերաստիա վիլայեթի մասին։

Մի ազգաբնակութեան կարեւորութիւնը — ասւած է այդտեղ իրաւամբ — կը չափի ոչ միայն իր բանակով, այլ և մանաւանդ իր անտեսական կարողութեամբ և իր կուլտուրայի աստիճանով։

Հայ տարբի այդ անտեսական ուժի մասին գաղափար կազմելու համար, ներկայացներ միայն Սերաստիոյ վիլայեթի առևտորական ու արդիւնաբերական ամենաստոյդ վիճակագրութիւնը։

Աեց վիլայեթների շարքում, կարելի է ասել, Սերաստիոյ վիլայեթը ամենանւազ հայկականն է. և սակայն, անեներև կերպով տեսնում ենք, որ այդ ըրջանի բովանդակ առևտորա - արդիւնաբերական գործունեութիւնը պարտ ենք գրեթե բացառապէս հայերին։

Ա Ռ Ե Լ Ծ Ա Խ Բ

Ներմուծութիւն. — 166 վաճառականներից 141-ը հայ է, 13 թիւքը և 12 յոյն ուրտա հանութիւն. — 150 վաճառականներից 127 հայ են, 23 թիւքը. Կապիտալիստա - բանկի հիրներ. — 32 հայ և ընդամենը 5 առձիկու և առ ութ պաններ. և առ հետառառ ութիւն. — Ընդամենը 9800 հոգի են, որից 6,800 հայ, մնացած՝ թիւքը։

Ճ Ա Ր Ց Ա Ր Ա Ր Ի Ե Ս Ց

Նոյն պատկերն է Գոյութիւն ունին 155 գործառներ, որոնցից 130-ը պատկանում են հայերի, 20-ը առձիկների և 5-ը օտարերկրեայ կամ խառը ընկերութիւնների։

Արհեստագէտ-ծառայողները բացառապէս հայեր են: Գործաւորների ընդհանուր թիւն է 17,700, որոնցից մոտ 14,000-ը հայ է, 3,500-ը թիւքը և 200-ը յոյն ու այլ տարրեր։

Մեկնութիւնները բոլորովին աւելորդ են:

Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ամենը, իրենք թիւրքերն եւ խոստովանում են, որ հայերի մէջ կրթութիւնը անհամեմատ աւելի առաջած է, քան թիւրքերի մոտ։

Երկար տարիներից ի վեր — ասում է վերոյիշեալ Տեղեկագիրը — թիւրք կառավարութիւնը յատուկ առըք է առնում նաև քրիստոնեաններից հանրային կրթութեան համար, սակայն, ինչպէս յայտնի է, յատկացնում է գումարները բացառապէս թիւրքական գպրոցներին . . . Մինչդեռ հայերը պահպանում են իրենց գպրոցները իրենց սեփական միջոցներով։ Ոչ միայն թիւրք կառավարութիւնը ոչ մի աջակցութիւն չի անում նրանց, այլ և ամեն աեսակ խոշընդուներ է գնում հայ ժողովրդի կրթութեան գործի առջև։

Հայոց պատրիարքարանը հրատարակել է այդ գպրոցների վիճակագրութիւնը 1901—1902-ին, Աբգիւ Համիդեան ու էժիմի ամենամուշ օրերում, կոտորածներից 5 տարի յետոյ Այդ ժամանակ պատրիարքարանից հախում ունեցող հայ գպրոցների թիւն էր 8ահկա-Հայոստանում՝ 458, երկսու աշակերտութեան թիւը՝ 32,822։ Բացի այդ՝ Կիլիկիոյ մէջ կար 90 գպրոց 9,132 աշակերտներով։ Կայսրութեան միւս մասերում կար 260 գպրոց, 82,695 աշակերտներով, երկու սեռից։

Պէտք է աւելացնել այդ գումարին մոտ 100 գպրոց, մի հազար աշակերտներով, որ պատկանում էին հայ կաթոլիկ և բողոքական համայնքներին։ Պէտք է, վերջապէս, աւելացնել մասնաւոր կրթական հիմնարկութիւնները Այդպիսով, պէտք է մօտաւորապէս հաշվել 1000 գպրոց, մոտ 100,000 երկսու աշակերտներով։ Առ գրեթէ աներեակայելի է այն սարսափելի ժամանակների համար։

Նոր ու էժիմի բերած յարաբերական համբերովութիւնից հայերը, բնականարար, շտապեցին օգտելի Հայ Միացեալ Ընկերութեանց 1912-ի տարեկան Տեղեկագրութիւնը շորս տարւայ ժամանակամիջոցում հիմւել են 102 նոր գպրոցներ 8,019 երկսու աշակերտներով։ Ազգան էր հայ տիկնանց ընկերութիւնը բացել է իր կողմից 36 գպրոց, 3,270 աշակերտներով։

Եթէ ի նկատի ունենանք նաև բողոքական ու կա-
թողիկ միասիօներների գպրոցները, կարող ենք ասել: որ
ներկայումս միմիայն Թիւրքաց Հայաստանի մէջ գոյու-
թիւն ունին մօտ 585 հայ կըթական հաստառութիւն-
ներ 52,000 աշակերտաներով, մինչդեռ թիւրքերը հազիւ-
թէ ունենան նոր Հայաստանում 150 գպրոց, յօտ
17,000 աշակերտութեամբ:

ԴԱՐԻՔԻ ՅՐԱՆՈՒԹՅԱՆ ԽԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԼ-9

Պ. Ֆր. Մակլեր ծանուցանում է մեզ, որ Ղարիբի
Ազատութեան ճանապարհին՝ խորագրով Դրօշակեան
պատերը սերի շարքը իր Փրանսերէն թարգմանութեամբ
— *Vers la Liberté*, արժանացել է Փրանսիական Ակա-
դեմիայի մրցանակին, լունիս 26-ի նիստում:

h b p f u s h g n tθ p k v

Ukrayinska filiialy ustanovlye k'

Ի նախա տերիքի ինքնառավագանութեան» — Ժամբորի Հ. Յ. Գ. ուսանող. Խմբից 68 ժողով, Լիեմից 65, Լայպցիկից 85, Ցիրիխից 12, Ֆրեյլից 113. Լայպցիկի Երեկոյարից 195, Քընչէվի Երեկոյարից 856, Գորիշի Շենականառանից 300, Գեհեննայի Խորից 30, Նախայից 70 ժ.

Ալիսի մարմինը 20 ուժի, Գևորգի ՄԵ 19. 45 ուժի, Երեք Բոլորից 35 ուժի, Քհառենինից 3000 ժամեկ, Պետրուրցի ուսանողներից 250 ուժի, Բերդի մարմինը 3784,5 զանկան, Բերդի խանայթից 4639,5 ուժինեան:

• Zurfbu. Grusfimib. Knoblauch.

Հետեւալ խոսքերէ. — Առաջնարքի Փօրուիկ 15 դամելան, 2 շուա-
մենի Առիւ 20, Քետափի Արձի 14, 20, 2 շուալանի Առիւ 13,
Ովասիսի Մարենի 15, Փաշալընի Միասկ 99, 10, Քետապոյի Կեղծ
80, 10, Հանաչի Կուիր 108, Խնակունինի Ապրաւգէն 60, Բողա-
ևասանի Լուսին 65, Խտիիւանի Կայճակ 27, Մարանարի Փօր-
ուիկ 40, Ակոսնի Աւզալ 60, Բրակի Մականան 24, 2 շուալանի
Առիւ 8, 20, Քասի Սուրբ Խաչ 30, Պայծառի Բժշկան 11 30, Հայ-
քանի Թագինի 40, Պան Արշակոս 80 ունելան:

«Արակեալին» Երանի Մարմին

Հետեւյլ խուժերեւ. — Պարզաբանված Մերկ 25 զմբ., Վերասահմանական 115, Մարգի Հայրակ 45, Բարձրի Առին 150, Զաքիսի Հեռա 42, Նորաշեն Կրէ 11, Շիւրականի Նորարար 30 զմբ.:

八〇九

Խնդրում ենք Ամերիկայի մեր բաժանորդներից—որ
արձանագրւել են 1912-ի № Ա. 6, 7, 8-ից—վե-
րանորդեն իրենց բաժանորդագրւութիւնը՝ հասցեներն
ուղարկելով, նորի հետ նաև հին, որպէս զի հարկա-
դրւած շինենք թերթի առարումը դադարեցնելու

ԴՐՈՇԱԿԱԿԱՆ

ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԹՐԱՆՏՎԱՐԵԼ

	dr.	u
1. Ապատման ողի (սպառ.)	10	
2. Եղանակական կեսերից (սպառ.)	5	
3. Գործեն սպառան (սպառ.)	5	
4. Թիստարն ազդիտիք, թ. է-նթել.լ (սպառ.)	40	
5. Հայ Են. Գուշնակութեան ծրագիր (կ. սպառ.) —		

- | | | |
|-----|---|----|
| 6. | Առաքութեան խմբի ուղարկութեան (ապր.) . . . | 20 |
| 7. | Կուսայ յառատակին (Չորս Յատակ) (ապր.) . . . | 50 |
| 8. | Հ. Յ. Ռ. Ե. ընդ. Խոզովի առենուրութիւն . . . | — |
| 9. | Քրիչելե, Խոմ-հոմին լուս, Վ.Ա.Պ.Ի. (ապր.) . . . | 20 |
| 10. | Երիտասարդելել, Գ. ԿՐԱՊՈՏԻՆՆ, բարձր Մ. Ա. (ապ.) . . . | 20 |
| 11. | Ազատութեան խմբագործին, Վ.Ա.Բ. Ա. (ապր.) . . . | 30 |
| 12. | " " " . . . | 60 |
| 13. | Ազրոյային շատարանութիւն, Լ.Ա.Ա.Յ. (ապր.) . . . | 50 |
| 14. | Ազատութեան խմբագործին, Վ.Ա.Բ. Գ. . . | 30 |
| 15. | Հայուսան և Մակերտին . . . | 50 |
| 16. | Կոմիտասն վերեւ, Լ. Ա. Խ. Ա. Խ. (ապր.) . . . | 3 |
| 17. | Հայրենիքի զարգացար, Մ.Բ.Ա.Լ. Վ.Ա.Վ.Դ.Ի. (ապ.) . . . | 1 |
| 18. | Կոմիտասն կամացիւ, կամունկներ (Բ. սպազր.) . . . | — |
| 19. | Դեպի կայս., և. Ա. Խ. Ա. Խ. (ապահով.) . . . | 2 |
| 20. | Եղրախոխութեաններ, Ա. Ա.Բ.Վ.Վ.Ե. (ապր.) . . . | 20 |
| 21. | Եսայազիդ Կոմիտասն զարուհութեան թեմա (Բ. սպ.) . . . | 20 |
| 22. | Պօնտի Կարմա, Վ. Արաթէկի . . . | — |
| 23. | Les tueries de Bakou , Ա. ARAZI (ապր.) . . . | 20 |
| 24. | Ցղափոխութեան զաօն (ապր.) . . . | 20 |
| 25. | Հ. Յ. Ռ. Ե. ընդ. Խոզովի առենուրութիւն . . . | — |
| 26. | Խոյ Մահմետականներին (բուժելէ) | 10 |
| 27. | Les Plaies du Caucase , ԱԿՆՈՒՆ . . . | 2 |
| 28. | Ազատութեան խմբագործին, Վ.Ա.Բ. Գ. Ք. Ե. (ապ.) . . . | 40 |
| 29. | Միջ մարզապանի դիմ (Քառայարդին) . . . | 50 |
| 30. | Վ.Խ.օսի բազէն, Վ.Ա.Բ.Վ.Դ.Ի. . . | 50 |
| 31. | Եղրախոխութեան մասն., Ք. Մ.Բ.Ա.Լ. Ե. . . | 1 |
| 32. | Հայուղիներ, Մ.Ա.Վ.Վ.Ն.Յ. . . | 50 |
| 33. | Սասու ն-մ'ուս կայսեր . . . | 10 |
| 34. | Հայոց անհանդեններ և Եւլուր (դասախոսութիւն
կարդաց. Թէլինում), Լ.Բ. Բ.Բ.Բ.Ա.Յ. . . | 50 |
| 35. | Մարտական համանգներ, Ա.Կ.Վ.Ա.Յ. . . | 1 |
| 36. | Միացլ./Շ. կաչ Խերիմյա ըսլու ազգեթին (բիշելէ) . . . | 10 |
| 37. | Խերիմյան բաներ, ՄԱՐ . . . | 25 |
| 38. | Քորակութեան կուտակութիւններ Փուլաստ-
նում, Վ.Ա.Բ.Վ.Ս.Ս.Ի. . . | 50 |
| 39. | Հայուսան և Եւլուր (դա ախօսութիւն կարդացած
Թէլինում), Գ. Բ.Բ.Ա.Յ. . . | 20 |
| 40. | Սարիւր-Շեոր (Անհաղութեան), Ա. Մ. . . | 25 |
| 41. | Եւլուր, կործիններ Հայ Պատի մասին . . . | 30 |
| 42. | Խոննուցիւ և Յ. Պատակցութեան (1907) . . . | — |
| 43. | Դեպ Ազգահանու ժողովի որոշումներ (1907) . . . | — |
| 44. | Հ. Յ. Պատակցութեան „Ժրագիր“ (1907) . . . | — |
| 45. | Programme-minimum , Հ. Յ. Գ. . . | — |
| 46. | Rapport (Տեղիկայիր) Եւրկայացած Միջազգա-
յին սպիտական կոնցրեսին (Ենթակա) . . . | — |
| 47. | Գեղաց Զավուր . . . | 20 |
| 48. | Déclaration du Congrès des Partis d'op-
position de l'Empire Ottoman . . . | — |
| 49. | Le Criminel sur le Trône , Է. ԱԿՆՈՒՆ . . . | 10 |
| 50. | Ցայտագործիր Օսմանեան կայսութեան թաղթիմադիր
սարերա կոնցրես . . . | — |
| 51. | Հ. Յ. Պատակցութեան „Ժրագիր“ (Առանձին) . . . | — |
| 52. | Սացախատի նամակներ, Վ.Ա.Բ.Վ.Ս.Ս.Ի. . . | 1 |
| 53. | Կոմիտազիդ ժողովդ, ինքնազատազնն, Վ.Ա.Բ.Վ.Ս.Ի. . . | 40 |
| 54. | Ընդ. կրութեան թերութիւններ, Գ. Ժ. Յ. Յ. Յ.
բարձր Ա.Ս.Մ. . . | 50 |
| 55. | Հայոց ընկերներին, Վ.Ա.Բ.Վ.Ս.Ս.Ի. . . | 30 |
| 56. | Համաձայնագրական բանակ, Մ. Վ.Ա.Բ.Վ.Դ.Ի. . . | 30 |
| 57. | Հ. Յ. Պատակցութեան „Ժրագիր“ (1909) . . . | — |
| 58. | Առումնեն և Յ. Ե. ընդ. Ազգահանու ժողով . . . | — |
| 59. | Sloghtoqիր (Rapport) Եւրկայացած Միջա-
յային սպ. կոնցրեսին (Խովհեակա), Ա. Գ. . . | 20 |